սակայն այս ավելի վաղ գրությունը, պարզ երևում է, հին եղանակի՝ դպրոցական երգ-եքաժությունը առարկայի ոճով խմբագրված տարբերակ է: Բացառված չէ նաև, որ 90-ական թվականներին գրի առնված եղանակն արդեն կոմիտասի վերամշակման արգասիքը լինի, բոլոր դեպքերում, սակայն, այն խիստ հնաբույր է: «Առաստ լուսաբեր»-ի մեղեդիի վրա թերևս հարկ չլինեք այսքան կանգ առնելու, եթե դա լիներ մի սովորական եղանակ: Հարցը հենց այն է, որ սովորական չէ, այլ իր եկեղային ինքնատիպությամբ և գեղարվեստական արժանիքներով առանձնանում, աչքի է ընկնում: Մ. Աբեղ-

յանից (բայց ոչ Խրիմյանից) այստեղ քերված քաղվածքում «տաղ» բառը իր մասնավոր իմաստն ունի: Հիրավի, այդ եղանակը հորինված է տաղերի (և ոչ սոսկ երգերի) եկեղային ոճով ու կարոցգովածով և որպես այդպիսին՝ ավելի ևս արժեքավոր է:

Ջանազան հուշագրական աղբյուրներում «Առաստ լուսաբեր»-ը համարվում է կոմիտասի «առաջին երգը»: Կարո հիշագրվանի հուշերում («Սողոմոն սարկավազ», «Արևմուտք» շաբաթաթերթ, Փարիզ, Ձ 5 (82), 15 դեկտեմբերի, 1946, էջ 7) գրված է՝ «Դուրսը, երբ գինը կպատվապիրեին ընտանիքներու մեջ, կերպեր ազգային

կես-կրոնական երգեր, որոնցմե մեկը միայն հի-
շողությամբ մեջը կմնա՝ «Առաւօտ լուսաբեր
Հայաստան երկրի...» Այս շրջանին Սողոմոն ա-
վագ սարկավագ Սողոմոնյանն էր անը։ Նոսքը
1892 թվականին Կոմիտասի՝ Քյուրաֆիա այցե-
լույսյանն է վերաբերում։

«Առաւօտ լուսաբեր»-ն իրոք հին խմբերգե-
րից է, նախաբեղիմյան շրջանից, և այդ առու-
մով Կոմիտասի ստեղծագործական կենսագրու-
թյան ուսումնասիրության տեսակետից էլ կարե-
վոր նշանակություն ունի։ Ներդաշնակության
կատարելությունը այժմ արդեն տարակուսելի չէ,
1894 թվականին գրած նրա ձոները նույնքան
կատարյալ հարմոնիա ունի։ Այնուամենայնիւ,
մեզ թվում է, որ հին ներդաշնակությունը նա
հետագայում (հետիցից վերադառնալուց հե-
տո) ինչ-որ չափով վերանայել և մասնավորա-
պես պոլիֆոնիկ ձայնատարությունը հարստա-
ցրել է։



Ընդհանրապես կրկներգը կարելի է կատա-
րել ամեն երկտողից կամ քառատողից հետո։
Բնագրում 1-ին նախադասությունը (երկտողի
երաժշտությունը) կրկնելու նշան են դրված չէ,
որ կարող է թերագրություն էլ լինել։ Այս երդի
կատարումը տեսնում ենք միայն վաղ շրջանի
հայտագրերում (օրինակ, 1902, 30 նոյեմբերի,
Գևորգյան ճեմարան)։ Հրապարակվում է առա-
ջին անգամ։

10. Արեն իջավ սարի գլխուն։ Բնագիրը գե-
տանք Մարգարիտ Բաբայանի՝ 1970 թվականին
Փարիզից բերված թղթերում, այժմ պահվում է
Կոմիտասի ֆոնդում։ Նոսք է վերնագիր գրված
չեն։ Սակայն, տիպիկ քաղաքային-ժողովրդա-
կան այս եղանակը, լավ հայտնի է, հորինված է
Ալ. Իսահակյանի վերնագրված քանաստեղծու-
թյան վրա։ Նույն խոսքերով նույն եղանակը մե-
ղեդիական մի փոքր զարգացված տարբերակով
գետնելված է Իսահակյանի քանաստեղծություն-
ներով հորինված երգերի ժողովածուում (ձայ-
նագրություն Վ. Սամվելյանի, տե՛ս Ա. Իսահակ-
յան, Երգեր և ոտմաններ, Հայպետհրատ, Երե-
վան, 1955, էջ 136)։

Բնագրում (մատիտով սևագրություն) 2-րդ

Կոմիտասյան քնագրերից 393/34-ում երգը
մատիտով է գրված և թանագրով փոփոխություն-
ներ ունի։ Այդ փոփոխություններով, նույն թա-
նագրով արտագրված է 391/6 ք-ում, արտագրու-
թյան ընթացքում ևս որոշ բաներ փոփոխված
են։ Գրությունը կրճատ է, կրկնվող հատվածի
տեղն է թողնված միայն, խոսքերը գրված չեն,
393-ում միայն վերնագիրն է։ Նոսքերը վերց-
րինք «Քնար Հայկական» ժողովածուից (Պե-
տերբուրգ, 1888, էջ 106)։ Այստեղ «Մե», ման-
կունք Սիոնի» հատվածը (5—6-րդ տակետը)
կրկնված է։ Կոմիտասի քնագրում դա չի նշված
և պարտադիր պահանջ չէ, թեև չի էլ քացառ-
վում։ Հե-ում (էջ 73, միանշան) սկզբից գրված
է՝ «խմբովին», «Մե» ֆորագի մոտ՝ «միայնակ»,
շարունակությունը՝ «նրից» «խմբովին»։ Գրողը
նկատի ունի տվյալ հատվածի ազատ կատար-
ման անհրաժեշտությունը։ Բազմաշան երգելիս
այդ գաղափարի իրականացումը կարելի է
պատկերել հետևյալ կերպ.

ձայնը բարձր դիրքով է գրված, այնպես որ գո-
յանում է ձայների խաչաձևում։ Կամ հեղինակն
այդ ձայնը հատկացրել է տեմոների և, ըստ
կանոնի, օկտավա բարձր գրել, կամ լույս պայ-
մանական գրություն է, որպիսին հաճախ հա-
դիպում ենք Կոմիտասի սևագրություններում։
Այդ ձայնն այստեղ նպատակահարմար գտանք
շարադրել քառի բանավորով, թեև տվյալ դեպքում
չի քացառվում նաև ձայների խաչաձևումով
կատարումը, ի դեպ՝ թե՛ որպես միատարր երկ-
շայն խմբերգ, թե՛ որպես զուգերգ։

«Արեն իջավ»-ը Ալ. Իսահակյանի վաղա-
գույն ոտանավորներից է (1891 թ.), երկնայն
երգն է՝ Կոմիտասի ընդհանուր առմամբ վա-
ղազույց աշխատանքներից (վերջ նշված հա-
գամանքը, թերևս, ակնարկում է երգի հենց ճե-
մարանական կատարման, «փոքրերի» և «մեծե-
րի» համար գրված լինելու մասին։ Ի դեպ՝ քա-
ցառված չէ, որ դա հենց Կոմիտասի հորինածը
լինի, որպես ճեմարանում անցնելիք դասարա-
նական երգեցողության նյութ կամ վարժույթ)։
Դ. Դեմիրճյանի վկայությամբ, Իսահակյանի
«երգերը սկսեցին հնչել 90-ական թվականնե-
րին, հնչեցին մի անգամայն, զի ու քարձա» (Ի-
սահակյան, Երգեր և ոտմաններ, Սրկու խոսք)։
Ըստ երևույթին, այս ոտանավորն ևս, ծնվելով,

նրա մի շարք ստեղծագործությունների նման գրեթե ամբողջապես երգի նյութ է դարձել: Այս դեպքում, սակայն, հետաքրքրական է նաև մի այլ հանգամանք. ժողովրդի մեջ տարածված է դրա մի այլ տարբերակն էս, տպագրված դանդաղ երգարաններում: Իս հետևյալն է.

Արշալույսը հորեք բացվավ,
Ամպ ու զամպն թուն կուգա,
Այ ձին եկավ, ամենք եկավ,
Ա՛խ, իմ յարք տուն չի գա:

Լույսը բացվավ, դուրը բացվավ,
Այ ձին քրոնած հերս չեկավ,
Սիրուն երգին վերջ տալան,
Արյունաբախտ հերս չեկավ:

Ա՛խ, սիրոն ձի, դու ի՞նձ ասա՛,
Որտե՛ղ բողիք իմ յարք,
Ո՛ր ձորի մեջ, ո՛ր քարի տակ
Ամենք բողիք իմ յարք:

Ամպերն եկան, մութը պատեց,
Միեակ հասած կուգա ես,
Սիրած յարքս, կորած յարքս
Սու ու չիվան կանն ես:

(«Գամանարան հայկական երգերում», Գահիրե, էջ 87: Խոսքերի հեղինակ հայտարարված է Ա. Խասակյանը, երաժշտությունը՝ «Աշոտական»: Կույնը կա նաև այլ երգարաններում):

Այնհայտ է այս տարբերակի քավականին անվարպետ քնույթը: Սակայն ուշադրության արժանի է այն, որ Խասակյանից վերցնելով քրեագրի վերջին տան պատկերը («Այ ձին եկավ, ամենք եկավ») ժողովրդական հորինողներն այն շարունակել, զարգացրել են, յուրովի պատմադարանել ձիու ճանտեր» վերադառնալը և ուսանվորի քովանդակությունը կապել են հայդուկային շարժման հետ, վերջին հաշվով նրան հարողել ազգային-ազատագրական երանգ:

Խասակյանի «երգային» ոտանավորների վերաբերյալ մոտավորապես նման երևույթի մասին նշել էր արդեն Դ. Իսմիրջյանը. «Խասակյանի երգեցիկ լիրիկան, քացի իր՝ ժողովրդական մոտ լեզվա-հոսական ֆակտորայից, նաև իր տաղաչափությամբ և քնույթով զարմանալի ճկուն է եղել, փոխարինել է շատ ընդհանրացնող, ժողովրդական պատմական իղծերի, քաղաքական պահանջների ծառայող հատկություն ունեցել: «Էսց մերիկ ջանն քանաստեղծությունը, որ ըստ էության սիրային ողմանտիկ էր, դա-

ռավ հասարակական բոլորովին այլ պատկերացումների արտահայտություն: Լավ այդպես մի շարք երգեր» (վերը միջատակված գրքից):

«Արևն իջավ»-ի քնույթը նույնպես «փոխել է, սակայն այս դեպքում ոտանավորի մեկ տունն է միայն օգտագործվել՝ նոր շարունակությամբ: Կարելի էր նաև ենթադրել, որ նախապես գոյություն է ունեցել Խասակյանի ոտանավորի մի այլ տարբերակ (ոչ անպայման այստեղ քերված տեքստով, որը կարող էր ենթադրվող այդ տարբերակի աղավաղված ձևը լինել), կամ Խասակյանի քանաստեղծությանը հիքք է ծառայել նախապես գոյություն ունեցած ժողովրդական մի ոտանավոր: Առաջին ենթադրությունը որևէ չափով հաստատող նյութեր չկան: Երկրորդ ենթադրության տեսակետից մոտենալով, հետաքրքրական է նշել, որ Խասակյանի քանաստեղծության ատաջին տպագրության մեջ («Արաքս», 1893, գիրք 2, էջ 56) այն վերնագրված է «Ժողովրդական մոտիկ» (յեն մասնագետները գտնում են, որ այդ խորագիրը նշում է ոտանավորի ընդհանուր քնույթը, այլ ոչ փաստական հիքքը):

Այս գուտ գրական-քանասիրական հարցն այստեղ քննարկելու չէ: Այլեպեսեք միայն երկու հանգամանք. 1841—45 թվականների Հայքենական Մեծ պատերազմի տարիներին այս երգը ճորից «ծնվեց» խոսքերի դարձյալ մի այլ տարբերակով՝ երգվում էր Էրեքի պատերազմական դեպքերի, այնտեղ զոհված հայ մարտիկների մասին: Ժողովրդի խոհերի ու ապրումների այդքան անմիջական արտահայտման միջոց դառնալը և ըստ այնմ հորինվածքում համապատասխանորեն տարբերակվելը՝ մասնավոր քաղաքի ժողովրդական երգի կենցաղավարման քնորոշ երևույթներից է: Խնդիր առարկա երգի այս կրկնալի տարբերակվելու փաստը խոսում է Խասակյանի ոտանավորի սկզբնաղբյուր լինելու օգտին, ի դեպ՝ անկախ նրանից, թե Կոմիտասի մշակումը ընձարանում «հի»-ն, թե արդեն «նոր» (վերը քերված) խոսքերով է երգվել:

Խասակյանի խիստ ժողովրդական քնույթի ստեղծագործության հարազատությունը Կոմիտասին ավելի քան հասկանալի է: Դրա արտահայտություններից մեկն էլ այն է, որ Կոմիտասը դեռևս 90-ական թվականներին գրի է տնել նրա «Դարդա լացեք» քանաստեղծության խոսքերով ստեղծված և նույնպես արագ ժողովրդականացած երգը (տե՛ս այդ երգի ծանոթագրությունը):

«Արևն իջավ» երգը խորագրելիս կատարման երանգավորողը դնելու համար նկատի ունեցանք, ինչպես այլ դեպքերում, երգչախմբի ձայների

մեղեդիական ինքնուրույնությունը ման հրանց կատարման ուժավորման միջոցով ընդգծելու կեմիտասյան սկզբումը: Ընդհանրապես, այս երկնայն երգը Կոմիտասի վաղ շրջանի բազմա-ձայնության գեղեցիկ նմուշներից է: Հրապարակվում է առաջին անգամ:

Կոթյունը պարտադիր են դարձնում կատարման ընթացքում տեմպը փոփոխելը: Մեր առաջարկն է՝

- 1-ին տուն - Molto sostenuto
- 2-րդ տուն - Poco mosso
- 3-րդ տուն - Un poco più mosso
- 4-րդ տուն - Tempo primo

Հրապարակվում է առաջին անգամ:

11. Մի գեղեցիկ պարզ գիշեր էր: Ան-ում այս երգը չկա, և դա հասկանալի է: Հն-ում թեև գրված է Կոմիտասյան «Տանդո»-ից անմիջապես հետո, բայց միանայն է և, ուրեմն, կապ չունի Կոմիտասի հետ: ԹԺ-ի երկնայն տարբերակը (էջ 30թ, № 80) պարունակում է Կոմիտասյան դաշնակման որոշ տարբեր, բայց որպես ամբողջովին Կոմիտասի աշխատանք վստահություն չի հերքում: Կոմիտասյան եռանշան դաշնակմամբ հետիմի 1897—98 թվականների տետրում է (462/1թ), բայց գրված է էշմանում (այդ տետրի մասին ասված է հատորի նախաբանում, տե՛ս ման «Տէր, կնից դու գՀայս» երգի ծանոթագրությունը):

Վանի կոտորածը (1895 թ.) նկարագրող այս երգը ժամանակին շատ տարածված է եղել և մինչև այժմ էլ չի մոռացվել ժողովրդի մեջ: Եր-պարանցներում տարբեր անվանումներ ունի՝ «Վանի կոտորածը», «Գիշերը Վանում» կամ պարզապես «Գիշեր» և այլն: Նույնպիսի տես-տը բանաստեղծական տեսակետից բավականին անվարպետորեն գրված, խոսքի և մեղեդիի շեշտերի զարմանալի անհամապատասխանու-թյամբ՝ երգը, այնուամենայնիվ, պատկերավոր և հուզական է շնորհիվ իր բովանդակության և, մասնավոր, գեղեցիկ, սառուն-մեղեդիական եղանակի, որը, ի դեպ ասած, հայ ժողովրդյա-կան փոքրածավալ երգերում հանդիպող յուրա-տեսակ և չափազանց գնահատելի կառուցվածք-ներից մեկն ունի՝ 4+4, 3+3+3՝ խիստ անհա-մաշարի և, միեւնոյն ժամանակ, լիովին հաճա-սարակչոված: Կոմիտասի կողմաշնակությունը պարզ, բայց մուրք ճաշակով է, գրավի իր ձա-ցների մեղեդիականությամբ, հրանցում տեղ զե-տած նմանակման տարրերով, լադա-տոնայն-կան գունեղ անցումներով՝ լյա միճոր-լյա մածոր-լյա միճոր-դո մածոր-մի միճոր-լյա միճոր:

Բնագրում խոսքերից մեկ տուն է գրված, տեմպ և երանգանիշներ չեն նշված: Նույնքան այստեղ լրիվ բերելինք Կոմիտասի «Գուսան» երգախմբի մասնակից Հակոբ Սարգսյանի կազ-մած «Վիլիկիա-երգարան»-ից (4. Պոլիս, 1921): Նմանքի փոքր չափսերն և բովանդա-

12. Հայրիկ, Հայրիկ, քո հայրենիք: Աղբյուր ենք են՝ 462/2, 3թ, 4, 391/1թ և 43թ: Կա մակ ԹԺ-ում: Անցյալ դարավերջի հայրենասիրական ամենատարածված երգերից մեկն է, ման ամե-նից ավելի ժողովրդականացածն այն երգերից որոնք նվիրված են եղել կաթողիկոս Մկրտիչ Նրիմյանին: Նույնքի հետիմակն է վանեցի Մեսրոպ Զանկյանը: Ուսանավորը հորինված է ժամանակի հայ քաղաքային՝ սիրային կամ հայրենասիրական այլ երգերի չափով, հավա-նարար պատրաստի եղանակ օգտագործելու հատուկ նպատակով: Այսպես, Հն է էջ 165-ու այդ երգի վերնագրի տակ նշված է՝ «Թե հա-րենյաց պալկադի»-ի չափով ու եղանակով: Եղանակը ժողովրդի մեջ և ձեռագիր ու տը-պագիր երգարաններում գոյություն ունի միմյան-ցից քիչ կամ շատ զանազանվող մի շարք տարբերակներով, որոնք բոլորն էլ լայնաշունչ, ծորուն են ու խոր քնարական, և բոլորն էլ գե-ղարվեստական ակնառու արժեք ունեն: Հնեց այդ է պատճառը, որ ժողովուրդն այդ եղանա-կըն օգտագործել է այնքան բազմակողմանի, տարբեր ժամանակներ դու հետ կապել է իրեն հուզող տարբեր խնդիրների, գաղափարների, իր անկախությունների անմիջական արտահայ-տություն հանդիսացող տոնավորներ: Ուսա-նավորներն իրենք էլ տարբերակվել են:

Վերջին հաշվով այս եղանակով երգվել է վեց երգ:

Սպ. Մելիքյանի արխիվում պահվող՝ Գ. Տեր-Ալեքսանդրյանի ձեռագիր երգարանում գտանք հնագույն գրանցումը (կամ այդպիսիներից մե-կը) ժողովրդի մեջ այն ժամանակ նույնքան տա-րածված և մույն եղանակով երգվող հետևյալ երգի՝

Գիշեր-ցիւրիկ կնառաւ, ա՛հ, օրորո, քո սիրու, մէ աշերու, վաղ արեւուդ գարշեցաւ, ի՛նչ օգտաւ: Խաբոս աշերու, արեւուդ և ուշերի ճաշերու... Միայն քեզ աւ կազաւ, որ ունենա քիչ մը գութ...

որը մակագրված է՝ «Дозволено цензурою 20-го декабря 1870 года».

Հետագայում, ժամանակի առափնի հուզիչ գաղափարներին հարմարեցնելով, այդ սիրա-հարական երգի խոսքերը մեքենաբար փոխա-րինվել են հայրենասիրականով:

Գիշեր-ցերեկ կհառաչեմ, ախ, Հայաստան, թո սիրտս, խափի քաղաք, վե՛հ քաղաքս լույս է ժայռի, ի՛նչ օգուտ, կարոտ մնամ սարից, դաշտից և սակեղանի տերևո՞ւ՝ Միայն առ Տեք առ պազախեմ, որ ունենա առ թեզ գութ...

Սովորաբար այս տարբերակն անվանված է՝ «Անճուկ Գոլսեցի հայ մանկանց»։ Տպագրված է «Սոխակ Հայաստանի» նրգարանում, հատ. 1-ին, էջ 70, 1874:

«Թե Հայրենյաց պատկազդի» նշանավոր երգը Գ. Սրվանձտյանի «Ծուշան Ծալաբաշան» թատերգությունից է, որը լույս է տեսել 1875-ին:

Հաջորդ երկու տարբերակները արդեն նվիրված են Մկրտիչ խրիմյանին, որ «հուշակված էր Հայրենի գրական և ժողովրդական անունովը»։ «1880-ին վաճ գնաց իբր առաջնորդ և մանավանդ ղեկավար՝ սովյակներին նպաստ քաժանելու գործին: Ուզեց երկրագործական դպրոց ան-գամ քանզի Վարդաուտ, սակայն իսկույն վրա եկան Համիդական օրերը, 1885-ին կառավարու-թյունը նախ հեռացրեց նրան վանքից, ապա և քաղաքից, 1890-ին, երուսաղեմ» (Վ. Փափազ-յան, Գատություն հայոց գրականության, Թիֆ-լիս, 1910, էջ 684 և 687): Ահա, խրիմյանի այս հալածվելու քաղաքացրությանը է Ջանիկյանը եւս տեղեղն տխրագին «Հայրենի, Հայրիկ, թո հայրե-նիք» (ներկա հատորում տպագրվող) նրգը: Մկրտիչ խրիմյանի Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրվելու առիթով նույն հեղինակը 1892-ին հրապարակ է հանել ուրախ, ցնծագին, պա-տասխանի» նրգը (այսպիսի պատասխան»-եր-գերի երևույթը հայ իրականության մեջ, ինչպես հայտնի է, տարածված է եղել):

Հայրի՛կ, Հայրի՛կ, թեզ ա՛նտու,
Վազարական մեք աշխարհ
Փուլը խեց, թեզ վարդ բերավ,
Լեճկի՛ր, ցնճա՛ր քյոթ հազար...

«Պատասխան» նրգը նույնպես տարածվել ու երգվել է, երգարաններում «մասնավորապես՝ Ան, էջ 188) խմամբով գրի է առնվել, քայց կեն-ցաղում չի պահպանվել: Միջինը «Հայրենի, Հայ-րիկ, թո հայրենիք»-ը առ այսօր ժողովրդի մեջ երգվում է:

Վերջապես, 6-րդ նրգը, որ ակնարկեցինք, նույն «Հայրենի, Հայրիկ, թո հայրենիք»-ն է, քայց ժամանակի ընթացքում ժողովրդի մեջ գոյացած

այդ ընկալումով, որպես վստադրականցի հոր և որդու հայրենասիրական երկխոսություն Հա-րիկ անունն այս դեպքում փոքրատառով է զըր-վում, այդպես այդ տարբերակը մեկնաբանված է Ա. Ա. Սարյան-Հարությունյանի «Հայ քաղաքա-ին ժողովրդական նրգարվեստը» աշխատության մեջ (տե՛ս «Հայ ազգագրություն և քանահյուսու-թյուն», հատոր 4, Երևան, 1973, էջ 152—153, ուր տրված է նաև մեղեդիի վերլուծությունը):

1898 թվականի նոյեմբերին դեռևս ուսանող Կոմիտասը հեղինկից գրել է Գևորգյան ճեմա-րանի տեսուչ Կարապետ Կոստանյանին. «Եկող տարի Ծննդարանի 25-ամյակն է: Հարկավոր է մի քանի քան պատրաստ ունենալ... Գլխավոր ուժն զորն կցնճեմ մի խումբ կազմելու... Եւ ար-դեն ունիմ «Տեք, կեցո»-ն և «Հայրիկ, Հայրիկ, թո հայրենիք»-ը թե խմբի և թե նվագի համար, և կպատրաստեմ ժողովրդականներից էլ ընտիր-ները»:

Հատկապես նվագի (ասենք նվագախմբի կամ գործիքային որևէ ամսամբի) համար այս երգերի շարադրությունն էի գտնվել, և հազվե թե այդպիսի քան եղած լինի: Հավանաբար, Կոմի-տասի խոսքը նվագակցությանը երգի մասին է, հավանաբար, նա նկատի ունեւ երգչախմբային նույն շարադրությունը անհրաժեշտության դեպ-քում օգտագործել մեներգի և դաշնամուրային (կամ այլ) նվագակցության համար է:

Երգչախմբային շարադրության վերը հիշա-տակված քննադրեր թեև էշմիանում, Կոմիտա-սի հեղինկից վերադառնալուց անմիջապես հետո են գրված, քայց հի՛ն աշխատանքներ են: Ներ-դաշնական ռժով դրանք միմյանցից քավակա-նին տարբեր են: 462-ում ներդաշնակությունը յուրատեսակ քազմասկորդային է, համեմատա-բար ավելի խորմատիկ, «դիտարդյալ» գունա-նատ և մտիկն է «Տեք կեցո» խմբերգի դաշնակ-ման քեղիմյան տարբերակներին: Հենց այս դաշնակումն է, որ Կոմիտասը գերմանացի եր-գիչների քաղաքակր վատարել է Միջազգային երաժշտական ընկերության հեղինկի մասնաճյու-ղի համար Ծարվենկա կոմսերվատորիայում 1899 թ. հունիսի 14-ին կարդացած իր դասախո-սության ընթացքում: Այստեղ խմբերգի առան-ձին դարձվածքներն իրենք տարբերակներ ու-նեն: Ընտրելով դրանցից լավագույն նկատվածը, 462-ի շարադրությունը զետեղել ենք հատորի հիմնական մասում: 391/11թ-ում ներդաշնակու-թյունը համեմատաբար դիտարկելի է, յուրատե-սակ «կեզու», կամ դարձվածքներ, որոնց նմա-նակը տեսնում ենք դեռևս 1-ին «Ազգային օրի-ներգ»-ում: Այս դաշնակումը գրեթե առանց տարբերության գտնվում է ԹԺ էջ 18-ում, ուրե-մը՝ գործածական է եղել: 391/11թ-ն բերված

է Տարբերակներուն: Իրան քաղաքներն մտնով և 391/43թ-ում եղածը (գրված է առանց մեղեդիական ձայնի), որն ավելի ևս «կոշտ» դիատոնիկ է: Բոլոր տարբերակներն էլ քննորշ են Կոմիտասի ստեղծագործական աշխատանքի վաղագույն, ամենակզմունական շրջանին, երբ մեղեդանկարն հոմոֆոնիկ-ակորդային սկզբունքը ռեակցիոն ամբողջականությունը ստեղծելու տեսակետից նրան երբեմն գրեթե անհաղթահարելի դժվարության առաջ էր կանգնեցնում:

«Հայրիկ, Հայրիկ, քո հայրենիք» խմբերգն ու տարբերակը հրապարակվում են առաջին անգամ:

13. Մայր Արաքսի ափերով կամ **Արաքսի արտասուքը**: Ռ. Պատկանյանի այս ջերմ հայրենասիրական և հուզական քանաստեղծությունը միշտ էլ լայն ժողովրդականություն է վայելել և քաղմայրով լավ կամ վատ եղանակներով շարունակ երգվել է: Դրանցից հնագույնը «Ազգային երգարան հայրեն»-ում է (1856 թ.), Նիկոլայ Տրիֆանովի հարմարեցրած անդեն եղանակը, որ Պատկանյանի քանաստեղծության հետ երգվելու համար գեղարվեստական որևէ հիմք չունի: Նույնքան և ավելի անհաջող մի այլ եղանակի մասին, որը ներդաշնակված վիճակում գետնով է և Եղիազարյանի կազմած «Հավաքածու հայ ժողովրդական երգերի» ժողովածուում (Ֆրանսերեն, Փարիզ, 1900), խիստ քննադատաբար արտահայտվել է ինքը՝ Կոմիտասը, «ժիշտ բողոքական, նկեղեցու երգ է (Choral), որ չէ կարող հյուսիսային ժողովրդին հատուկ պաշտոյանքը հայի՝ արևելցու վատ զգացման թարգմանել լինել, ո՛ր թե ժողովրդական լիներ» (Կոմիտաս, Հոգվածներ և ուսումնասիրություններ, Երևան, 1941, էջ 186): «Մայր Արաքսի ափերով» երգի անհամեստ լավ և հայ քաղաքային ժողովրդական ոճով հյուսված մի քանի եղանակ բերված են Արաքսի Սարյառ-Հարությունյանի «Հայ քաղաքային երգարվեստը» աշխատության մեջ («Հայ ազգագրություն և բանահյուսություն» 4-րդ գրքում, Երևան, 1973, էջ 147—149): Տարիների ընթացքում որպես «Արաքսի արտասուք» երգի եղանակ «քաղաքացիության լիվ իրավունք ստացել» և առավել ժողովրդականություն է ձեռք բերել այն եղանակը, որի վաղագույն և հետաքրքրական տարբերակներից մեկը գտնում ենք Արշակ Բրուտյանի «Երգարանում», գրված 1878 թվականին (հայկական ձայնալիշերով, պարվում է Գրականության և արվեստի թանգարանում), իսկ, ներկայումս (արմատացած տեսքով՝ Եզնիկ Երզնկյանի՝ տպագրված «Ազգային երգարան»-ում

(1882, էջ 99) Պատկանյանի քանաստեղծության բովանդակությունը կենդանի կերպով հաղորդող, պարզ ու անմիջական, ջերմ ու հարազատ, կրու և ավարտուն մեղեդի է դա:

Տվյալներն առում են այն մասին, որ արդեն 90-ական թվականների 1-ին կեսին այդ եղանակն եղել է Կոմիտասի հետաքրքրությունների շրջանակում. գետնով է և Հե-ում (էջ 177) եռաձայն մի դաշնակումով, որը, ամենայն հավանականությամբ, հենց Կոմիտասին է, քանի որ շատ մեծ է նրա այն տարիների աշխատանքներին և ընդհանուր քան ունի նույն երգի հետագա դաշնակումների հետ (գրությունը, ղեկավարությամբ, որոշ սխալներ է պարունակում, և ներդաշնակողի անունը նշված չէ): 1896-ին այդ նույն եղանակի սկզբնական մոտիվը Կոմիտասն օգտագործել է իր «Մալոմոտն»:

Հաջողվել է գտնել «Մայր

Արաքսի ափերով» երգի Կոմիտասի մշակման հետևյալ՝ քննարկելի. 393/31թ և 32, 472-ից հավելվածը, 472/1,2,3, 408թ, «Հայրենիք» երգարանում հեղինակի օրոք տպագրվածը, 441/14թ և 17, 436: Կամ նաև արտագրություններ՝ ԹԺ, էջ 2 և էջ 3, ՅՖ 8, ինչպես և Հ. Հովհաննիսյանի ու Ա. Մայիլյանի թողածը: Այս քննարկերը միմյանցից այս կամ այն չափով տարբերվում են՝ մեղեդական փոքր մանրամասներով, ներդաշնակությամբ, խմբի ձայնակազմով, դրա հետ կապված՝ տոնայնությամբ և երգի քաղաքական դիրքով:

Հնագույնը 393/31թ-ն է, մի միևնուր, 1-ին մասնաշաղկապությունը՝ երկնայն, 2-րդում ձայները երկուական բաժանվում են, ապա հորից միանում, խմբի կազմը նշված չէ, հավանաբար մեմորանի երգչախմբի համար է նախատեսված, թեև ըստ էության ավելի հիշեցնում է մեծահասակների արական քառաձայն խումբ: Նույն ժամանակի է 393/82-ը, լյա միևնուր, սկզբից՝ երկնայն, հետո՝ եռաձայն, դարձյալ, հավանաբար, մեմորանի խմբի հատկացված, և դարձյալ՝ ավելի հարմար մեծահասակների արական խմբի համար: Այստեղ երգի երկրորդ մասնաշաղկապում ներդաշնակումը գրեթե իր վերջնական տեսքն է ընդունել (կադանսում որոշ տարբերություններով), հենց այստեղ էլ առաջացել է երգի ձևն ընդարձակելու գաղափարը. Բ տառով նշված է 2-րդ տան մեղեդին (նույն՝ 1-ին տան մեղեդիի ելեկշային թեթև տարբերակումն է, երկու տարբերակն էլ ժողովրդի մեջ գոյություն ունեն), որ հետագայում դարձրել է երգի զարգացման քաժից (գրված է ու միևնուր, միայն մեղեդին): Այստեղ նաև նշված է լյա-մի, քայց հետագա դաշնակումները՝ լյա, առ, մի և դա միևնուր են:

472-ին հավելվածը, որ հայտնաբերվեց Մ. Բաբայանի՝ Փարիզից նոր ստացված թղթերում,


393/32-ի քարեխալված մաքրագրությունն է՝ յյա միճոր, ձայնակազմը ճշված է՝ A. T. B. (Ճկատի ունի պատանի պտերին)։ 472/1, 2-ը՝ սոլ միճորում, արական եռաձայն երգչախմբի համաք, մեղեդիի վերոհիշյալ երկու տարբերակների դաշնակումն է՝ 472/3-ը՝ յյա միճորում նույնն է, ինչ որ 393/2-ը։ 406 գ-ն եռաձայն խառը (S. A. T.), մի միճոր՝ առանձին փողերի թերթիկ է, թանաքով մաքուր գրված, երանգանքներով և «դաշնակեց կոմիտաս վարդապետ» մակագրությամբ. երևում է որ գրված է որևէ մեկի հանձնելու համար։ Նույնը Հակոբ Հովհաննիսյանի ձեռքով արտագրված կա իր թղթերում։ Միշտ նույնպիսի թերթի վրա գրված մի այլ երգի տակ Հովհաննիսյանը մակագրել է՝ «Արտագրեցի իսկական ձեռագրից 1906 թ. մարտի 27-ին»։ Իր հերթին, նույնը կա նաև Ա. Մալիլյանի թղթերում, դարձյալ Հ. Հովհաննիսյանի ձեռքով։


1908-ին Բոստոնում լույս տեսած «Հայրենիք» երգարանում հրատարակողների կողմից տրված նախաքանում ասված է՝ «Կոմիտաս վարդապետի և պ. Գ. Միրզոյանի (Սյունի) դաշնակած երգերը ընդունած ենք Կովկասեն՝ հեղինակներին» (էջ IV), ուստի՝ դրանք հեղինակալին բնագրի արժեք ունեն։ Միայն Արաքսի-ն այստեղ մի միճորում է, հատկապես քառաձայն խառը խմբի, քայց տենորի և քսաի համար մեկ գիծ է գրված։ Այս տարբերակը արտատպված է «Երան-երգարան»-ում, որտեղից արտագրել է Ն. Թեյմուրազյանը (Թժ բնագիր, էջ 3, № 8)։ Միևնույն ժամանակ Թժ-ում կա նաև դո միճոր տարբերակ, խառն խմբի համար՝ S.A.T.B. (փաստորեն՝ եռաձայն), որ Երդաշնակությամբ միայն փոքր տարբերություն ունի «Հայրենիք»-ում տպագրվածից։ 441/14բ—17-ը, յյա միճոր, քառաձայն արական խմբի համար, թեև ուշ ժամանակի ծոցատենորում է, քայց երգի դաշնակումը համեմատաբար անկատար է և կիսատ, երևի փորձել է վերահիշել նախկին տարբերակները.

436-ը սկսված է արական-քառաձայն, շարունակված հինգ, հետո երեք ձայնով, ընդհանուր առմամբ՝ ինչպես նախորդը՝ կիսատ սևագրություն է։

«Գուսան» երգչախմբի 1912 թվականի ապրիլի 8/21-ի համերգում «Մայր Արաքսի ափերով»-ը կատարվել է որպես «եռաձայն արական և երկսեռ խմբերգ»։ Հասկանալի է, որ մեկ տունը կատարել է արական խումբը, հաջորդը՝ երկսեռ խումբը։ Վերը թված աղբյուրներում միմյանց համապատասխանող դաշնակումների ճիշտ այդպիսի գույզ չկա։ Ամենայն հավանականությամբ, կատարվել է 441-ում սկսվածը (քանի որ դա Պոլսի շրջանի ձեռագիր է), որն ավարտված վիճակում չի պահպանվել կամ չի հայտնաբերվել։ Հայտնաբերված տարբերակների մեջ երաժշտական զարգացման սկզբունքով մեկը մյուսին կրցված են արդեն հիշատակված 472 սոլ միճոր դաշնակումները։ Միաժամանակ դրանք առավել հետաքրքրական տարբերակներն են, ուստի որպես մեկ ամբողջություն զետեղեցինք հատորի հիմնական մասում, տպագրվում է առաջին անգամ։ Կատարելիս երկու տների երաժշտության տարբերությունը (երկրորդը նաև փոքր-ինչ արագ է կատարվելու) կարելի է համապատասխանեցնել խոսքերին, նկատի առնելով, մասնավորապես, քանատենորային մեջ առկա հարց ու պատասխանի հանգամանքը։

Տարբերակներ բաժնում զետեղված են՝ ա. 472-ին հավելվածը, բ. 406գ-ն, գ. «Հայրենիք»-ում տպագրվածը և, նկատի ունենալով ձայնակազմի գործնական հետաքրքրականությունը, դ. Թժ դո միճոր տարբերակը։ Ա, բ և դ տարբերակները նույնպես տպագրվում են առաջին անգամ։ Սկզբնական երկու դաշնակումները (393), հատկապես կաղաններում մյուսներից ունեցած տարբերությունը ցուցադրելու նպատակով, բերվում են ստորև.





Պատկանյանի քանաստեղծությունը, որ բազմիցս տպագրված է ամենուր, այստեղ լինի չի քերվում:

«Մայր Արաքսի»-ն (խոսքը կոմիտասյան մշակումների մասին է) այն դեպքերից է, երբ մետրից դուրս, rubato կատարմամբ հետևանքով գոյացող երկարացումները գրի են առնված իբրև երկար տևողություններ, և դրա հետ միաժամանակ, մեղեդիի տակտաբաժանումը փոքր-ինչ քունագրոսիկ կերպով է ենթարկված խոսքերի շեշտադրությանը: Այդ մեղեդին ներկայումս ընկալվում է գույզ չափով, տեղ-տեղ ազդեցիկ է սկզբունքով երկարացումներով կամ լայնացումներով: Համեմայն դեպք, կոմիտասյան մշակումները կատարելիս պետք չէ երաժշտության հոսքը ենթարկել միակար եռամաս չափի: Պետք է կատարել ազատ, փոքր-ինչ rubato, թեև քառաշեշտերը կանոնավոր համընկնում են տակտի շուրջը մասերիս հետ, քայց այդ մասերը պետք չէ շեշտել:

«Մայր Արաքսի»-ի կոմիտասյան կամ նրան վերագրվող դաշնակցումներ կան զանազան ձևազարդ երգարաններում ևս: 1900-ական և 10-ական թվականներին, հայ խմբերգային արվեստի ընդհանուր առմամբ եռանդուն զարգացման այդ շրջանում, երգչախմբերի երգացանկում Կարա Մուրադյանի և Նվմայանի մշակումների հետ հավասար և նրանցից ավելի մեծ տեղ էին բռնում Կոմիտասի վաղ մշակումները: Դրանք արտագրվում, օրոք նաև խողովքում վերանայնագրվում և ձեռքից ձեռք էին անցնում: Բնականաբար, գոյանում էին և աղավաղումներ: Այդպիսի աղավաղված արտագրության հանդիպեցին, օրինակ, Ե. Բաղդասարյանի 1909 թվականի մի տետրում:

«Մայր Արաքսի ամերով»-ը, հավանաբար թուր տարբերակները, Կոմիտասը կատարել է

թե վաղ, թե ուշ տարիներին: Կոմիտասի մշակումով այդ երգը կատարվել է նաև 1914 թվականի հունվարի 10-ին Բնուլիմում կայացած հայկական երկույնի (նշանավոր Tiergarten-ի Keiser-saal-ում, կատարող՝ «Mozartchor», դիրիժոր՝ երգչախմբի ղեկավար Մաքս Բաուտկե), որտեղ Կոմիտասից հնչել են նաև «Սոնա քար»-ը, «Հով Լինդ»-ն, և հայերի մասին դասախոսությանը հանդես է եկել ղեկավոր Յոհաննես Լեպսիուսը (պահպանվել է հայտագիրը):

14. Թող բլբլ չեթե: Մ. Բաբայանի թղթերում հայտնաբերված և ներկայումս 472-ին հավելված էջի շարադրությունը քերված է Տարբերակներում: Նույնը 393/33-ում որոշակի քարելավումով է՝ հարմոնիան փոքր-ինչ սրացված, ավելացված է վերջին ավարտը. զետեղված է հատորի հիմնական մասում: Այստեղ (393/33) մտադրություն է ծագել ամբողջը հատկացնել արական խմբի՝ տեմոր, քարիտուն և քաս: Բացի դրանից, ճշել է՝ e = c, այսինքն՝ տոնայնությունը դարձնել cis: 33p էջում սկսել է քառամայն դաշնակցում, քայց կիսատ է թողել: Այստեղ է, իր հերթին, ճշված է՝ e = d կամ cis: Այս տոնայնություններում խմբերգի վերադաշնակում չի հայտնաբերված: 472-ին հավելված թղթի շարադրությունը մեկ տոն ցած դիրքում գտնվել նաև կոմպոզիտոր-խմբավար Եղիշե Բաղդասարյանի անձնական գործածության «23 հուլիս, 1909, Արմավիր» մակագրությամբ տետրակում: Կոմիտասի անունը գրված է: Ձայները սխալմամբ հենց սկզբից ճշված են՝ S. T. B. (սխալմունքի աղբյուրը Կոմիտասի քնագիրն է, որտեղ տեմորի սկզբնական ֆորաը գրված է վերևի տողին թեև ճշված է, որ հետո այդ տողին տպաբանի երգամասն է գրված): Մեզ համար կարևոր

այն է, որ երգի այդ վաղ տարբերակը 1909 թը-
վականին «բրջանառության մեջ է եղել»:

Երգը խմբագրելիս մենք այն թողել ենք
սկզբնական ձայնակազմում և տոմայնությունը
չենք փոխել: Խմբերգը մեր օրերում առաջին ան-
գամ երգվեց Կոմիտասի ծննդյան 100-ամյակին
նվիրված գիտական հասարակական: Տարագը-
րվում է առաջին անգամ:

«Թող ըրյով չերգեն»-ի թեման Կոմիտասն օգ-
տագործել է ուսանողական տարիներին գրած
«Աղո թայլերգի» միջին մասում (ձեռ. 578):
Երգի բանաստեղծական տեքստն իր «պատաս-
խան» ունի, բերվում է ստորև.

Թող երգե՛ր ըրյով Մշո դաշտերում,
Թող վարդե՛ր բազմին Սասն լեռներում,
Թող մեր թըջամից սարսն՛, աղբափն՛,—
Փազան ոսոխենք ճաղե՛ն, տրաքե՛ն:

Մշո դաշտերը ծաղկունքով բազմեմ,
Հայտ սերունդը կառնե՛ր առավա՛մ,
Ինչքան որ կուզե՛ք թըջամից թող գան,
Սասն լեռներեն ի՛նչ պիտի ստանան:

Ինչո՛ւ չծաղկե ծաղկեն անինա,
Այդ թըջամուցը ո՛վ կվախենա,
Թող հա՛ աղչիկը երգե՛ր վառելուն,
Սուր զենքը ձեռի՛ն չա՛րդ տա թըջանում:

Հիշեցնում է «Հիմի է՛լ լոնք»-ի հանգամանքը,
այն տարբերությամբ առնվազն, որ այս պա-
տասխանը բանաստեղծական վարպետությամբ
չի փայլում: Հետադրորդական է, որ որոշ երգա-
գրանքներում (ինչպես, օրինակ, Հակոբ Սար-
գսյանի «Կիլիկիա»-ում, Կ. Պոլիս, 1921, էջ
188) հիմնական երգի տխուր տրամադրությունը
մերժելով, բերված է այս պատասխանը միայն:


15. «Հայ՛ն ապրինք, եղբա՛յրք»: 472/4, 6, 7, 8
493, 47: Այս երգի մասին տե՛ս հատորի նախա-
քանում:


Լրիվ երգը միաձայն, փնձակով կա՛. Հն. էջ 9, թաղ-
ված: Լեռնականի «Ազգային երգարան»-ից (1882
թ. էջ 87): Կոմիտասյան մշակումը բավականին
խոշոր կառուցվածքի երգչախմբային գործ է, բը-
նույթով մոտենում է պոեմի, ձևով՝ կանոնատի:

Գրված է պատանեկորեն պարզ ու անմիջական:
Հեղինակը երգին անդրադարձել է մի քանի ան-
գամ, համաձայնաբ՛ար՛ սկսած դեռևս նախաբե-
լինյան տարիներին:

Վերը հիշատակված բնագրերը, բացի վեր-
ջինից, էշմածնական վաղ տարիների են, զըր-
ված Մեմարանի խմբին հարմար ձայնաձևակա-
նություն, համապատասխան ցածր տոնում: 472/4
մատիտով սևագրությունը սկզբնականն է, այս-
տեղ ծագել է երգի վերջաբանը կանոնով կա-
ռուցելու գաղափարը: 472/8-ը առաջին լրիվ և
համեմատաբար շատ աշխատված տարբերակն
է, և՛նայնությունը փոխված վիճակում (այդ մա-
սին՝ ստորև) բերված է այս հատորի Տարբե-
րակներ բաժնում: Հետագա խմբագրումից գոյա-
ցել է 493-ը, որն իր տոմայնությամբ գետնված
է հատորի հիմնական մասում: Նկատվում է, որ
այս տարբերակը գրելիս դաշնամուրից չի օգ-
տվել (պտերացիայի նշանները դնելիս շարու-
նակ «տատանվել է» ֆա-դիեզ և ֆա միեռորի
միջև): Այս քնագիրը շատ գործածվելուց չափա-
զանց մաշվել է և ներկայումս դժվար ընթերցելի
է: Բնագրի վրա կան ուշ ժամանակի սևադրանք
ուղղումներ, երևում է արտագրելիս է եղել, ար-
տագրությունը հայտնաբերված է:

Երգարաններում երբեմն այս երգի առաջին
մոտիվը մաժոր է: Կոմիտասը, ինչպես տեսնում
ենք, մշակել է միմյուր տարբերակը, որը համ-
ընկնում է Բեթհովենի հուշակալոր «Ապպասիո-
նատ»-ի սկզբնական մոտիվի հետ: Աղդյոր այդ
համընկնումը Կոմիտասի համար նշանակություն
չի՞ ունեցել տվյալ երգով այնքան զբաղվելու
և նրան ճեմարանական երգչախմբի ընդհանուր
առմամբ համեստ հնարավորությունների սահ-
մաններում դրամատիկական շեշտեր հաղորդե-
լու մեջ: Համեմայն դեպս, ուշադիր նայելով,
խմբերգում կարելի է գտնել «Ապպասիո-
նատ»-ին հարազատացող այլ տարրեր ևս (տո-
մայնական-ռեգիստրային ոլորտը, ստորին ձայ-
ների օստիկնատ շարժումը և այլն. գուցե հենց
«Ապպասիոնատ»-ի աղդեցությամբ պետք է
բացատրել ֆա-դիեզ և ֆա միեռորի միջև նրա
«տատանումը», որ նշեցինք վերը): Այս առումով
նետարրքական են նաև 472/6—7 էջերում գրու-
նված ուրվագրերը. երկրորդ՝ մուդրորակ երգի





փոխարեն կամ նրանից հետո զետեղելու համար կոմիտասը գրել է մի հատված, որում կարող ենք կոսմոս Բեթովյենի Հինգերորդ սիմֆոնիայի հատյալից ֆինալի մոտիվային կառուցվածքներ, վերջապես՝ «Մարսեիկեզ»-ի առոցիա-ցիաներ (սկզբնաղբյուրում դա հորդորակ երգի 2-րդ տունն է)։

Թո՛ղ որ ինչ-որ չափով միամիտ, պատահական կամ երկտասարդական անմիջականությունից թխող, քայց հաստատապես անկեղծ հույզերի, և այն՝ հայրենիքի ազատագրության խնդրի հետ կապված հույզերի արտահայտություններ են արանք։

Մուսավորապես 1808-ի շրջանում գրված 471/7 քնագրում «Հիմի է՛լ լո՛նք», «Մեզ նոր արև ծագե՛» երգերի կողքին սկսված է «Հայ ապրիլը, եղբայր»-ի մի նոր խմբագրություն, երևի մեծարանից դուրս, այլ երգչախմբով կատարելու կամ տպագրության ներկայացնելու նպատակով։ Երգը փոխադրված է փոքր տեղեցիա վեր, փորձել է սկսել մածորում, առանձին ձայների ֆրագմենտ խոշորացրել է։ Այս տարբերակը լրիվ գրված վիճակում (եթե եղել է) չի հայտնաբերված։ Հետևելով հեղինակի մտադրությանը և հաշվի առնելով խմբերգի գործնական արժեքը, հարմար նկատեցինք երկու **ֆա-դիեզ դիմոր** մշակումներից մեկը (472/8) զետեղել հեղինակի ընտրած վերջնական տոնալությունում՝ **լյա միմորում** (Տարբերակներ բաժնում)։ Բա-հատեղական տեքստը իր երկու քաղկացուցիչներում էլ քաղմատում է, այստեղ թերում ենք մասամբ, լրիվ վիճակում կարելի է գտնել երգարաններում։

Ի դեպ՝ «Հայ ապրիլը»-ն ևս ունեցել է իր «պատասխան» ոտանավորը՝ քանանստեղծ Մկրտչի Ամենյանի նույնանուն պարոդիան, որում, հակադրվելով Նար-Գեյի հոմանոսիական երգացանցերին, հեղինակը շոշափում է սոցիալական խնդիրներ, վեր հանում ժամանակակից հայ

կյանքի շատ արատներ։ (Տես՝ Հայ նոր գրականության պատմություն, Հայկ. ՄԱՀ ԳԱ հրատարակչություն, հատ. 3-րդ, էջ 717, Երևան, 1964)։

Խմբերգի՝ երկու տարբերակն էլ հրապարակվում են առաջին անգամ։

16. Տե՛ր, կեցո՛ր՝ դու զՀայա։ Աղբյուրներն են՝ 1845/1, 2ք, 462/2ք, 431, 463, 514 և 472 (Մ. Բաքալյանի թղթերից հավելված թերթիկը)։

Տե՛ս «Հայրիկ, Հայրիկ» երգի ծանոթագրությունը։

Վերջ թված տարբերակներից առաջին երկուսը հաստատապես հեղինակում են գրված (1845 տետրը «1897—1898. Բեռլին» թվականն ունի), երրորդը (թեև 462 տետրը ևս նույն թվականն ունի) գրված է էջմիածնում, վաղ տարիներին։ Կոմիտասի ակնարկը առաջին տարբերակի մասին է, որի քննարկի վրա երգն արտագրելու հետքեր կան (տակտների հաշիվ), իսկ հայտնի է, որ մինչև Բեռլինից վերադառնալը նա այս երգի նոտաները մեծարանի տարեդարձի առթիվ տպոդրենելու նպատակով նախապես ուղարկել էր էջմիածին։

Այդ երեք տարբերակները մերոյաշնակման սկզբունքով ընդհանրապես միմյանց մոտե են (յուրաքանչյուրը նախորդի կատարելագործումն է) և աչքի են ընկնում հարմոնիայի փոքր-ինչ նրբալայնությունում և խրոմատիզմի՝ հեղինակի համար ոչ քնորոշ առատությամբ (այս տեսակետից դրանք մնանվում է 1901 թվականին գրված «Հայն տուր, ով ծովալե՛ր - ոռոմանը, տե՛ս դրա ծանոթագրությունը)։ Բայց այդ հարմոնիան օժտված է արտահայտչական լիակատրությամբ։ 1845/1-ը և 462/2ք-ն քերված են Տարբերակներում (ա և բ), 1845/2ք-ն որ դրանց միջին տեղն է քունում (գրված է առանց կրկնների) այստեղ քերվում է՝ ցույց տալու համար, որ երգը զանալիս հեղինակի միաբը զարգացել է պոլիֆոնիայի տարրերն ընդգծելու ուղղությամբ։

I. S. Str. կն - ցո դու զձայն եվ ա -
 II. S. Str. կն - ցո դու զձայն եվ ա -
 I. A. Str. կն - ցո դու զձայն, ա -
 II. A. Str. կն - ցո դու զձայն, ա -

I. լա զնո - սա պայ - ծառս, կն - ցո,
 II. լա զնո - սա պայ - ծառս, կն - ցո դու
 I. լա - զնո - սա պայ - ծառս, կն - ցո դու
 II. եվ ա - լա զնո - սա պայ - ծառս, կն - ցո դու

I. կն ցո դու զձայն
 II. զձայն, կն ցո դու զձայն
 I. զձայն, կն ցո դու զձայն
 II. զձայն, կն ցո դու զձայն

I. T. Ի ցո Ի - ջնայ տե - դի զվ -
 II. T. Ի ցո Ի - ջնայ տե - դի զվ թոռ
 I. B. Ի ցո Ի - ջնայ տե - դի զվ
 II. B. Ի ցո Ի - ջնայ տե - դի զվ


քոռ չալ - քա - ւի - տի մեր
 չալ - քա - ւի - տի մեր հաւ - տա -
 - քոռ չալ - քա - ւի - տի մեր հաւ - տա -
 զԱ - քոռ չալ - քա - ւի - տի մեր հաւ - տա -
 մեր հաւ - տա - տա - տա -
 տա - մեր հաւ - տա - տա -
 տա - մեր հաւ - տա - տա -
 տա - մեր հաւ - տա - տա -

Հարմոնիայի ներազդածության, քայքայ, ինչո՞ւ
չէ, նաև հարստության, համարձակության տե-
սակետից հետաքրքրական է նաև կրկներգի՝
1645-ում եղած տարբերակներից մեկի ստորև
բերվող հատվածը (ուշադրություն ենք հրավի-

րում այդ հախադասության մեջ գործածված
«օտար» կամ այտերացված ակորդի՝ քարճրաց-
ված III աստիճանի մածոր տեպտակորդի վրա,
որը կարող է դիտվել նաև որպես իջեցված
կլիինտայով VII-ը):

Մյուս տարբերակներն ուշ տարիների են և
ընդհանուր առմամբ հախորդների պարզեցումն
են. ի դեպ՝ խրոմատիզմը պակասում, և դիա-
տոնիկ տարբերն ավելանում են: Միայն 2-րդ
տան սկիզբը գրված է 431 թերթիկ, որտեղ գրե-
ված են նաև՝ «Գարուն ա, ձուն ա արել» խմբեր-
գի սի միճոր, վերջնականին շատ մոտիկ և
1905-ին տպագրված տարբերակը, «Ոտիդ

արա», «Հիլ արա, եզո» և «Հոնա, գոմեշ» ժողո-
վրդական երգերի գրառումներն ու դրանցից ա-
ռաջինի դաշնակումբ, որ 1905-ին Թիֆլիսի հա-
մերգում կատարվել է: 431-ը մի սևագրություն
է. եղել չորս փորթիկ թերթիկների վրա մատի-
տով գրված 463-ի համար, որից այստեղ բեր-
վում է կրկներգի իր մատարբերական ներդաշ-
նակությամբ:




իր հերթին, 514-ը 463-ի որոշ փոփոխություններով խմբագրումն է, «Հայկական մալթայան, դաշնակեց Կոմիտաս վարդապետ» վերնագրով, թանաքով մալթայ գրված, հավանաբար մի տեղ ուղարկելու նպատակով (արդյոք «Հայրենիք» երգարանի՞ն, 1908 թ.): Որպես վերջնական տարբերակ, 514-ը քերված է հատորի հիմնական մասում: Տեմպի և կատարման ուժի ցուցիչները նշանակելիս նկատի ենք ունեցել 463-ում մեղիմակի դրած նշանները:

Մ. Բաբայանի թղթերում հայտնաբերված տարբերակը (ինքնագիր, ներկայումս պահվում է 472 ձեռագիր տետրի հետ) իր ներդաշնակությամբ նման է հախորդներին, քայց նրանցից տարբերվում է երգի յուրատեսակ սղված, պարզեցված ու թեթևացված շարադրությամբ: Հավանական ենթադրությունն այն է, թե ուշ է գրված, քայց դժվար է պնդել, քանի որ գրված է պատանի սուպրանոներով ու այտերով արական խմբի համար: Այս «հակիրճ» շարադրությունը իր հատուկ արժեքն ունի և նույնպես գեներելով է Տարբերակներում (զ): Բոլոր հիմնական տարբերակները հրապարակվում են առաջին անգամ:

1920-ական թվականներին Վարդան Սարգսյանը Բյուրեղի իր «Արմենիա» երգչախմբի համար, հավանաբար հիշողությամբ, քաղմագրել է Կոմիտասի «Ո՛վ մեծաքանի դու լեզու» ս «Տէ՛ր, կեցո՛ւ» խմբերգերը («Տէ՛ր, կեցո՛ւ»-ն Կոմիտասը Պոլսում կատարել է, օրինակ, 1913 թ. 12/25 մայիսի և 2/15 հունիսի համերգներում, Հայ գրեթե հոբելյանի օրերին և այլն): Առաջինում սակավ, երկրորդում (որի հիմքը հենց 514-ն է) առատ փոփոխություններ են գույացել: Վ. Սարգսյանն, ավելացրել է նաև իր հոփնած դաշնամուրային նվագակցությունը: Պետք է ասել, որ այս փոփոխություններն արդարացի չեն, դրանց հետևանքով այս կամ այն չափով սուղել են կոմիտասյան քննադրերը:

«Տէ՛ր, կեցո՛ւ» դու զՀայս» երգին ու նրա նշանակությանը քարձր գնահատական է տվել Միքայել Նալբանդյանը (քերված է հատորի նախաբանում, տե՛ս Մ. Նալբանդյան, Ընտիր երկեր, Երևան, 1953, էջ 101, նաև Մ. Մուրադյան, Հայ երաժշտական մշակույթի 19-րդ դարում և 20-րդ դարակերպում, Երևան, 1970, էջ 57):

17. Հիմք է՛լ լռեց: Վաղդանի կողմից է Վարդանի երգը, Ի. Պատկանյանի «Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը» վիպասանությունից: Խուսրեմ այտեղ քերվում են հատվածաբար: Նրաժշտության քննակիր-աղբյուրների քանակը մեծ է, նրանց միջև տարբերությունը՝ փոքր: 391/8—10 կիսատ սևագրություններ են՝ ցա և ու միմոր: 391/8-ը ցա միմոր տարբերակում հետաքրքրական է մեղեդիի սկիզբը, որ առավել շեշտված է 1-ին ֆրագի հարցական ինտոնացիան, իսկ ու միմոր տարբերակում՝ ռատացե՛ր, եղբա՛րք» ֆրագը, որտեղ նույնպես հարցումը ավելի համառ է դարձված: 1891 թվականի մի ձեռագիր երգարանում էլ (Արվեստի ինստիտուտ) նույն 1-ին ֆրագը դիֆուսկան այլ ձևակերպում ունի՝



կյսպիսի փորձերի ընթացքում զարգացել է նալ պրոֆեսիոնալ երաժշտության մեղեդիական աստերի արվեստը:

405/12թ ռե միեթը ճախորդի փորձ-ինչ բարեփոխումն է . հեղինակը, այնուամենայնիվ, ավանդական մեղեդի պահպանել է: Նույնը, մեկ տոն թարձրացված, Կոմիտասի ձեռք ընդված նոտաներից տպագրված է «Հայրենիք» երգարանում (էջ 24, 1908, տե՛ս «Մայր Արաքսի ավերակ» ծանոթագրությունը), իսկ սրան լիովին նման է ԹԺ-ում և Հակոբ Հովհաննիսյանի թղթերում եղածը: Ժամանակագրական տեսակետից սրանց հաջորդում են 418 և 471/1, որ վերջնականն է և այստեղ տպագրվում է առաջին անգամ:

Այս խմբիցի ուշ կատարումներից հիշատակենք 1914 թվականի ապրիլ 20 (մայիս 3)-ի համերգը (Պոլիս), որ Կոմիտասի՝ այն ժամանակ «Հայ գուսան» կոչվող երգչակմբի վերջին ժողովրդական համերգն էր: Ի դեպ՝ նույն համերգում Վարդանանց երգերից կատարվել են նաև «Մեզ նոր արև ծագե»-ն և «Նորամուշ»-ը:

18. Մեզ նոր արև ծագե: Այլ կերպ կոչվում է՝ «Երգ Վարդանանց զորավարաց» կամ «Ավարայրի երգ»: Եթե փորձելու լինենք փնտրել այս երգի մեղեդիական ոճի անվերապահորեն արևմտաեվրոպական ակունքները, հավանաբար պետք է դիմենք Հայդին (համեմատի՛ր, օրինակ, «Տարվա եղանակներ» օրատորիայի հետ): Սակայն, հայդյան ինտոնացիաները Մամիկոնյան զորավարների այրուձիի երբեք նկարագրելիս այլ բնույթ, այլ իմաստ են ստացել:

Հիմնական աղբյուրն է՝ 471/3 մատիտագիրը, որ բավական դժվար ընթերցելի է: Այստեղ հավաստվում կա՝

1. Հիմի է՛լ լոննք,
2. Մեզ նոր արև ծագե,
3. Հա՛յ ապրենք, եղբա՛րքս:

Մեզ թվում է՝ Ռե 2-ը եղել է «Մայր Արաքսի ավերակ»-ը: Հիանի որ «Հիմի է՛լ լոննք»-ը վերջնականն է, տարբեր և ավելի կատարյալ է «Հայրենիք» երգարանում 1908-ին տպագրվածից, ուրեմն հավանական է ենթադրել, որ սա ևս զոր-

ված է «Հիմի է՛լ լոննք»-ը «Հայրենիք» երգարանին ուղարկելուց հետո: Հակոբ Հովհաննիսյանի թղթերում կա իր ձեռքով արտագրությունը, (հիշատակվել է նաև սույն հատորի հաղայարանում) տակը նշված՝ «1908 թիվ, 9 հունվարի, Աշտարակ»:

Մյուս բնագրերից 395/6-ում մի նախնական դաշնակում է խորալային ոճով (մեղեդիի մեկ հնչյունին մեկ ակորդ), որից հետո նույն տեղում ձեռնարկել է վերամշակելու և գոյացել է 471/3-ի սևագրությունը: Երգի 2-րդ կեսը պահպանվել է նաև 493 թերթիկի վրա, որը նույնպես 471-ին նախորդած սևագրությունն է, «Հայ ապրենք»-ի նման այս երգը ևս 493 բնագրից արտագրվել է, քայց արտագրությունը պահպանված կամ հայտնաբերված չէ: Իսկ ընդհանրապես Կոմիտասի հին աշխատանքներից է, ԱՆ-ում (էջ 116) երգի քառամասյն շարադրության տակ գրված է՝ «Երաժշտություն Կոմիտաս արեղա Սողոմոնյանցի»: Ավելացնենք նաև, որ զանազան երգարաններում տեսնվող միաձայն եղանակի համեմատությամբ Կոմիտասի մշակած եղանակն աչքի է ընկնում իր ամբողջականությամբ:

«Մեզ նոր արև»-ը հնչել է՝ 1904 թ. ապրիլի 25-ին Մեմարանում կայացած մեծ համերգում (հավանաբար գործիքային նվագակցությամբ) Մեմարանի 35-ամյակին նվիրված համերգում (Էշմիաճնում Կոմիտասի վերջին համերգներից մեկը՝ 1909, սեպտեմբերի 26), ուշ տարիների կատարման մասին տե՛ս նախորդ երգի ծանոթագրությունը:

Հրապարակվում է առաջին անգամ:


19. Ռե հի՛ն անուշ: Այս երգը «Գարուն» վեր տառությամբ, ձայնի և դաշնամուրի համար, և ուսշին անգամ տպագրվել է «Հմար Հայկական ընկերության Բ շրջանի «Հանդես վեցամսեա»-ում («Հեղինակը Տիգրան Չուխանեան, Գաբրիել էրանեան»), թիվ 2, մայիս 30, 1882, Կ. Պոլիս: Նոտաների մոտ նշված է «Սոսք՝ Ա. Պեշկիսաշ լեան, եղանակ՝ Հանդեսին»: Ստորև այդ առաջին տպագրությունից մեղեդին թերում ենք ակնհայտ վրիպակներն ու նոտագրական թերությունները ուղղելով և խոսքի ուղղագրությունը պահպանելով:

Բոսք
Ա. ՊԵՇԿԻՍԱՅԵԱՆ

եղանակ
ՀԱՆԴԵՍԻՆ

Ռե հին անուշ ել ինչպե՛զով ա - ու-տ-ու-տեց փը - չես. հո - վի՛


Ծաղ - կանց վը-լալ զուր - զու - բա-լով ես մա - զե-րում եր - սին փափ-կիկ:




Համրահայտ դարձած այս մեղեդին Կոմիտասի խմբերգային մշակման մեջ քաղականին փոփոխված է. զամազան հատվածներում այն խմբագրվել է ի հաշիվ տիպիկ եվրոպական ինտոնացիաներից կազմված դարձվածքների պակասեցման, առաջին պարբերության ավարտը լադային շեղում է ստացել, ամբողջապես դուրս է մնացել 2-րդ տան խոսքերով երգվող հարաշարային հատվածը: Այդ փոփոխությունների շնորհիվ մեղեդիի ձևը դարձել է ամփոփ, նրանում երևան են եկել լադային փոփոխականության գույները, որոնք հնարավորություն են տվել ստեղծելու նույնքան գունեղ ներդաշնակություն:

Մշակման առաջին փորձերը վերաբերում են անցյալ դարի վերջին տարիներին, թերևս դեռ Չոխաճյանի կենդանության օրերին: Աղբյուրներն են՝ 1645/9թ (1897—98 թթ., Բեռլին), քառամյակ, լյա-քենոյ միներ, միայն առաջին նախադասությունը (կիսատ), զույգ չափով, նշված է՝ «վերևից երեմոս», որեմո՛ դաշնամուրային կամ նվագախմբային ընկերակցություն նկատի ունի. 398/20 (դո միներ, կիսատ), 436 (դո միներ,

ներդաշնակման սկզբնական ուրվագիր), 416 (մի-քենոյ միներ, սակավ կատարյալ, նախնական, հշել է՝ «ռե-ուլ գրել»), 391/18 (սի միներ, այսինքն՝ ռե-ուլ սկսվող, ավարտված սևագրություն), 391/18թ (նախորդի մաքրագրությունը), 409 (դո միներ, ավարտված, շրջերեսին՝ փոփոխություններ) և 394/8թ՝ (նույնպես դո միներ, հայկական ճայնանիշերով փոփոխություններ ունի): Այս քնագրերի առատությունը վկայում է լատուց այդ երգի նկատմամբ Կոմիտասի տաճած համակրության մասին, դրանք հաջորդաբար յնկը մյուսի բարելավումն են ներկայացնում: Վերջին երեքը միանգամայն ավարտուն են: 409-ը 391/18թ-ի 394/8թ-ի միջին տեղն է բռնում, երվում է երգի երկու բաժնիների սկզբնական ֆրազիների աստիճանաբար վերջնական տեղք ստանալը՝ առաջին բաժնում հնչման թեթևացումն ու նրան պոլիֆոնիկ քնույթ տալը, երկրորդ բաժնում՝ սկզբնական հնչյունների կարճացումը և հարմոնիայի խորմացումը: Ստորև՝ հատվածաբար կերեք ձևն էլ.





394/8թ-ն, որ Էջմիածնի համեմատաբար ուշ գրվածքներից է, գետեղված է հատորի հիմնական մասում: Հայկական ձայնահիշերով հեղինակիլուղղումները նկատի են առնված, երանգանքները դնելիս հենվել ենք 391 18թ-ի վրա, որտեղ կան հեղինակի դրած նշանները: 391 18թ-ն բերված է Տարբերակներում: Երկու տարբերակն էլ տպագրվում են առաջին անգամ:

1912, 8/21 սպրիլի համերգի հայտագրում կատարողը նշված է՝ հնգամայն երկսեռ խումբ: Այդպիսի տարբերակ չի գտնվել. արդյոք «տեղնուտեղը» ավելացված հիգեդերորդ ձայն է եղել:

20. Մինչդեռ հուսով խայտա բնություն կամ այլ կերպ՝ Երգ հայրենի: Բնագրերն են՝ 414՝ խումբ և դաշնամուր, նախնական ուրվագիր է. 1531՝ արական ետերգ և խառը խումբ, նվագախմբով (2 ջութակ, 2 կլարնետ, 4 սաքսոֆոն, փող, դաշնամուր և հարվածայիններ. վերաբերում է 1904-ին, երբ Էջմիածնի ճեմարանը գնաց այդ գործիքները. տե՛ս նաև Մելքոն Բրիշչյանի հոդվածը՝ «Պե՛տք է քաջալերել, թե ոչ», «Տարազ»-ում, 1904, № 32, էջ 294), անավարտ է. 405/11թ՝ ձայնակազմը նշված չէ, հավանաբար առանց դիսկանտների է. T₁. T₂. B₁. B₂., ընդ որում 2-րդ և 3-րդ ձայները հաճախ նույնն են երգում. վաղագույն ավարտված մշակումն է, բերված է Տարբերակներում: 477/6-ում մտադիր է եղել սկիզբը եռամայն արական, երկրորդ քաժիճել խառը խմբի և դաշնամուրի համար գրել, շատ կիսատ է մնացել: 445/10-ում միայն կրկներգն է, նման մյուսներին, 478/7—7թ-ում հինգձայնանի, կիսատ, առանց կրկներգի, ըստ երևույթին՝ սա 443-ի նախափորձերից է. 13-րդ էջում ձայները նշել է «Գուսան» երգչախմբի երգիչների անուններով՝

- T₁ — Հայկ / Սեմերճյան/
T₂ — Գուրգեն / Լիմայան/
B₁ — Վարդան / Ակգյուլյան/
B₂ — Վահան / Պոշնակյան/

Կոմիտասի տերմինով՝ քառերգ է, դաշնամուրով և խառը երգչախմբով: Նվագակցությունից սակավաթիվ նշումներ կան միայն:

443/17թ, 19 և 23՝ ակորդների դասավորությամբ, ձայնատարությամբ, մասամբ և հարմոնիզավոր միկանցից փոքր չափով տարբերվող վերջին երեք տարբերակներն են արական կվինտետի և խառը երգչախմբի համար, առանց նվագակցության: Վերջինը, որ գրված է 1912-ին և առաջին անգամ կատարվել է նույն տարվա սպրիլի 1/14-ի համերգում(կվինտետում վերը նշված մեմակատարներին ավելացել է Արշա՛ն Մի՛նասյանը), բերված է հատորի հիմնական մասում: Ի դեպ՝ համերգի հայտագրում նշված է՝ հնգերգ և քառամայն երկսեռ խմբերգ դաշնակով: Առանձին նվագակցություն չի հայտնաբերվել. մենք ենթադրում ենք, որ մի վերջնական ավարտված նվագակցություն չի էլ եղել, մասնավորապես մեներգիչներին օգնելու և երգի այդ առաջին քաժիճի յուրաքանչյուր երգեհոնային հրճչում հաղորդելու նպատակով (որ թիւում է երաժշտության բնույթից), դաշնամուրով նվագակցելիս Կոմիտասը կատարել է կվինտետի և երգչախմբի նույն պարտիտուրը: Կվինտետի ձայնական մեն ծավալը քաջատրվում է «Գուսան» երգչախմբում առաջնակարգ (թեև պրոֆեսիոնալ երրորդայն չլսածված) ձայների ակալությամբ:

Էջմիածնական վաղ շրջանի 405/11թ-ից մինչև Պոլսի 1912 թվականի 443/23-ը երկարատև ժամանակ էր անցել, քայքայ երգում համեմատաբար քիչ քան է փոխվել, համեմայն դեպս, առաջին քաժիճը՝ արական անասնի, երկրորդը՝

խառն երգչախումբ, և կրկներգի բուն ներդաշնակությունը մնացել են անփոփոխ խմբերգն ու իր տարբերակը հրատարակվում են առաջին անգամ:

21. Ո՞ր է՞նչ քաղցր բան: Ժամանակին շատ տարածված երգ է եղել, խոսքերը փոփոխվել են: Դեռևս Կարա-Մուրզան իր համերգներում կատարել է «Անփոք նավաստիք» խոսքերով, երգարաններում գտնում ենք թե՛ «հին» և թե՛ «նոր» խոսքերը առանձին-առանձին գրված: «Նոր» խոսքերով երգը հաճախ անվանված է «Ռատանդի երգ»: ՀՆ 818-ում շարադրված է այսպես.

Ո՞ր է՞նչ քաղցր բան՝
Ըլալ կանթախան,
Կաննել միշտ անձող,
Թափառել անքան:

Ո՞ր է՞նչ դառն բան՝
Ըլալ քոթաբան,
Տարվել միշտ փողը,
Գլխում տալ հողը:

Ո՞ր է՞նչ քաղցր բան՝
Ըլալ զինվորական,
Սուրբ է մեր ձեռին՝
Հարեմյազ պաշտպան:

Ո՞ր է՞նչ անհշտ բան՝
Ըլալ ուսումնական,
Գրել վառ սրտով
Ազգային մատյան:

Երևում է՝ համապատասխան հորինումներով հանույցով տարբերակվել, հարստացվել է տեքստը, նման երաժշտության մշակմանը: Նկատելի է նաև երգի բովանդակությունը փոփոխելով՝ ճշրանք ի վերջո ազգային-հայրենասիրական ուղղվածությունը հաղորդելու ձգտումը (տե՛ս նաև «Արևն իջավ սարի գլխուն» երգի ծանոթագրությունը), այն ժամանակների համար սիմվոլիզմով երևույթ: Կոմիտասի օրոք-Էջմիածնի Գեփորգյան ճեմարանում կատարվել է (1902, 14 ապրիլի, 1904, 25 ապրիլի և այլն) որպես **ծաղրերգ**:

Հայտնաբերված բնագրերը միջին կամ ուշ Էջմիածնական և Պոլսի շրջանի են: Թերևս ճեմարանում կատարված տարբերակների մասին զարգացր կարող է տալ Հակոբ Հովհաննիսյանի թղթերում եղյուղ՝ նրա ձեռքով արտագրությունը:

408-ը Էջմիածնական միջին կամ ուշ տարիներից գրված տարբերակ է, միշտ ցած սահմանով, մյուսների համեմատությանը պակաս հետաքրքրական: Մատչելի փոփոխություններ այս տարբերակը նմանեցնում են 435-ին: «Թափառել միշտ անքան» տողից «միշտ» բառը հանված և

փոխարենը լիզա է ավելացված: 435-ը՝ դարձյալ սահման իջնող քառյուղ, դեռևս առանց ռեպիկների է (տե՛ս հաջորդ տարբերակները), գրված է առաջին չորս տակտը: 394/39 թվականների վրա կան ուղղումներ, որոնք իրականացված են 542/1-ում: Այդ վերջինը՝ համեմատաբար մաքուր մատիտագիր՝ ավարտված է, բերված է հատուկ Տարբերակներ բաժնում: Հայտնաբերված տարբերակներից ամենից ուշ գրվածը և կատարյալ 542/2-ն է, որ բերված է հատուկ հիմնական մասում, Պոլսի համերգներում (օրինակ՝ 1/14 և 8 /21 ապրիլի, 1912) հենց այս է կատարվել: Հրատարակվում են առաջին անգամ:

565 համարով արիթմիկում գրանցված է Վարդան Սարգսյանի ընդօրինակումը, հավանաբար՝ ընդողջությամբ գրի առնված տարբերակ, որ պարունակում է նաև գրի առնողի փոփոխությունները և բավական հեռու է բնագրերից: Նշված է՝ «Կոմիտաս վարդապետ սուրբ էր երգել տալ մեկ աստիճան քարձր» (իր գրածը նույնպես սույն ժամոք է):

22. **Պանծա՛** դու Հայ միություն կամ այլ կերպ՝ **Հայերե՛** Հայկական քարեգործական ընդհանուր միություն: Այս քաղերգի ստեղծման պատմության վերաբերյալ մանրամասնորեն գրված է Է. Հակոբյանի հոդվածում («Ջահակիք», Գահիրե, 19 հոկտեմբերի, 1967) և մեր «Կոմիտասի երաժշտական ժառանգությունը» հոդվածում («Կոմիտասական» ժողովածու, 1969, էջ 76): Հակա՛ն մասն այս է. 1911 թվականի մայիսին, Կոմիտասը Ալեքսանդրիայում ներկա գտնվելով Հայկական քարեգործական ընդհանուր միության հիմնադրման 5-րդ տարեդարձի տոնակատարությանը, միության ընդհանուր քարտուղար, գրող Վահան Մալեգյանից հանձնարարություն է ստանում հորինելու ՀԱԸՄ քաղերգ: 1912-ի փետրվարի 24-ի նամակում և. Պոլսից Կոմիտասը Մալեգյանին շարադրում է ստեղծվելիք քաղերգի բանաստեղծական տեքստի նկատմամբ իր պահանջները՝ «կարճ, կոտրակ, ժողովրդական դյուրամատչելի լիզու և ոճ... որքան պարզ՝ այնքան վեհ կլինի... մաղթանքի ձև չունենա: Ի վերջո Կոմիտասն ինքն է հորինում քաղերգի և՛ խոսքերը, և՛ երաժշտությունը: Սակայն, ըստ «Ջահակիք»-ի տեղեկության, նա ունեցնում է հանձնարարության կատարումը այնքան, որ մինչև այդ Միության վարչությունը պաշտոնապես ընդունված է լինում Հ. Սիմանյանի քաղերգը («Փառք Միությանը, դաշնակ և երգ, քառանյալ խմբերգ. խոսք՝ Վ. Մալեգյանի, երաժշտության՝ Հ. Սիմանյանի, տպագրված է Փարիզում, անթվակիր): Կոմիտասի ոտանավորը հրապարակվել է 1914 թվականի «Միություն» պաշտոնագրերում, քաղերգի

երաժշտությունը մեզնք հրապարակել ենք «Կոմիտասական» ժողովածուում (էջ 78):

Արխիվում կան «Քայլերգ»-իմ վերաբերող հետևյալ նյութերը. 442, էջ 79-ից մինչև 74 (Կոմիտասն իր նոտատեսությունում հաճախ գրությունն երկու ծայրից է սկսել)՝ քայլերգի սկզբական սևագրությունն է, արտացոլված է երգի հոբինման ուղ ընթացքը: 442/73՝ Տախտրդի մատիտով արտագրությունն է, որ ըստ էության դարձյալ սևագիր է: 506 փորձիկ նոտային թերթի վրա թանաքով մաքրագրություն է (պարտիտուր), առաջին 4 տակեր պարունակող թերթը պակաս է: Այդ մաքրագրությունից հետո, անդրադառնալով 442/73-ից, 7, 8 և 11-րդ տակերում հեղինակը խմբագրական մանր փոփոխություններ է արել: «Կոմիտասական»-ում և հերկա հատորում երգը տպագրված է 442/73-ից, հիշյալ փոփոխություններն ևս նկատի են առնված (այստեղ ուղղված է առաջին տպագրության 23-րդ տակի 2-րդ ձայնի վրիպակը):

Հավանաբար, 506 պարտիտուրից արտագրված մեկ օրինակ, ինչպես և Ն՝ 1437-ը ժամանակին Կոմիտասն ուղարկված է եղել Վ. Մալեգյանին: Ն՝ 1437-ում (այս ինքնագիրն արխիվում ուշ է ստացվել) ձևաքով գծված նոտային թերթի վրա մեղեդին է՝ նոտաների տակ գետեղված երկու տուն խոսքերով, և երկու առանձին թերթեր՝ միայն խոսքերով, մեկի վրա՝ Ուով երկու տունը, մյուսի վրա՝ այլ տաղաչափությամբ այն երկու տունը, որոնց մասին հիշատակված է «Ջահակի»-ում: Այդ հավելյալ «տները» հետևյալն են՝

Թ՝ճ գութանը փող դասել,
ժողովարդ շատաչե,
Թ՝ճ սաղակը թավաղե,
Ու եզմակը բառաչե՛:
Գութան շատաչե՛,
Եզմակը բառաչե՛:

Թ՝ճ ուսումը չող կարծե,
Շեն ու ալան ծաղիկ,
Թ՝ճ հայտնակը կորանա,
Հայ մեջակը գորանա:
Հարակ կորանա՛,
Մշակը գորանա՛:

ստորագրված է՝ Կոմիտաս վարդապետ, և. Պոլիս, թվական չկա:

Դատելով բովանդակությունից և 442/72-ում եղած VV նշանից, կարելի է ենթադրել, որ այս լրացուցիչ երկու «տունը» սեկ-մեկ պետք է տեղադրվեին երգի խոսքերի երկու տներում, կրկնվեցին առաջ: Հավանաբար, եղել է նաև դրանց համապատասխան մեղեդիական լրացուցիչ՝ հատվածը, որի հետքերը, սակայն, հայտնաբերված բնագրերում չեն նշմարվում (խոսքի ծա-

վալից դատելով, այդ հատվածը 10—12 տակո պետք է կազմեր):

Ըստ երևույթին, գոյություն ունի «Քայլերգ»-ի ուարցին վերաբերող՝ Վ. Մալեգյանին ուղղված Կոմիտասի առաջին անհայտ մնացող մի նամակ էւ, որի մեջ՝ ա. պետք է բացատրված լինի հավելյալ խոսքերի գաղափարն համահամարը, ք. պետք է երևա լրացուցիչ հատվածի մեղեդին. գ. պետք է հիշված լինի երգն ուղարկելու ժամանակը, որը հնարավորություն կտար վերջնականապես պարզելու, թե ինչու՞ որպես ՀԲԸՄ քայլերգ ընդունվել է ոչ թե Կոմիտասի, այլ Սիմանյանի հորինվածը: Կհայտնաբերվի՞ արդյոք ՀԲԸՄ Միությունը «բարձրորդեղ (ինչպես Վ. Մալեգյանն է արտահայտվել), հարաճուն արխիվներուն մեջ» մի այդպիսի նամակ, թե ոչ... Անկախ դրանից, պարզ զգացվում է, որ այդ լրացուցիչ հատվածը, որին, ի դեպ, կարելի է հատկացնել Ա. Չոպանյանի՝ «տևարություններն ու բառախաղերն ոչ գերծ» դիտողությունը («Ամսաթիտ», 1939, Ապրիլ-Մայիս), հետագայում արհեստականորեն է հավելված, այն օրգանական մասնիկ չի դարձել քայլերգի համար, որի թե՛ խոսքը և թե՛ երաժշտությունը առանց այն էլ ավարտուն են և ամբողջացած: Արժեքավոր է հենց այն, որ այդ քայլերգում, հատկապես նաև «Մայրենի լեզու» խմբերգում, փոքր չափանիշներում հեղինակը տեղադրել է հնարավորին չափ ընդարձակ ներքի կառուցվածքի մի ամբողջություն:

«Քայլերգ»-ն ունի և մեկ այլ առանձնահատկատվություն. իր նամակում Կոմիտասը գրել էր՝ «Միտք ունեն երկու, երեք, չորս և այլն ձայներով կազմել, որ ըստ տեղին ու պահանջին այ ուզած ձևովը երգել կարելի լինի»: Այս գաղափարը, որ թխում էր զուտ գործնական, այն ժամանակներում չափազանց կարևոր նկատառումներից, իրագործվել է, այսինքն՝ քայլերգը հնարավոր է կատարել նաև 2-ձայն և 3-աձայն, գրեթե բոլոր զուգորդումներով, անշուշտ, 1-ին ձայնի մշտական մասնակցությամբ (նույնպիսի գաղափար իրականացված է դեռևս 1891 թվականին գրված «Ազգային օրհներգ»-ում և այլ երգերում):

Երևանի Կոմիտասյան արխիվում «Քայլերգ»-ին վերաբերող նյութերի մեջ կա նաև Վ. Մարգարյանի մի ընդօրինակությունը (Ն՝ 584), որում, հավանաբար իր երգչախմբով կատարելու նպատակով, ընդօրինակողը Կոմիտասի երաժշտությունը քալականին փոփոխել է:

23. Ահա ծագեց կարմիր արև կամ այլ կերպ՝
Հաստի երգը: Անցյալ դարավերջին և այս դարսկզբին այնքան տարածված այս երգը դար-

ցական կարիքների համար ներդաշնակել է նաև կոմիտասը, և ոչ մեկ անգամ: 391/22-ը վաղագույն դաշնակցություններից, հարմարիկ հյուսվածքի ձայները աշակերտական վարժությունների նշանակություն ունեն, մինչդեռ ամբողջությունը բավականին քարհենույն է, բերված է Տարբերակներում: Հետագայում նույն երգը հրուսակի նպատակներով դաշնակել է Պոլսում 442/8: Եղանակի ոչ-մոնոդիկ կազմը թելադրել է կիրանել խելոպական հարմոնիայի պարզագույն միջոցներ, միևնույն ժամանակ ձայներին հնարավորին չափ ինքնուրույնություն է տրված: Երկրորդ տարբերակը, որ բերված է հատորի հիմնական մասում, զետեղված է եղել նաև դուրդական երգեցողության համար 1988-ից նախագրի իրավունքով քաղվագրված ժողովածուում: Տպագրվում են առաջին անգամ:

26. **Իմ հայրենյաց հոգի վարդան.** Այս երգը կոմիտասը դաշնակել է դեռևս իր գործունեության վաղագույն շրջանում, 90-ական թվականների առաջին կեսին: Այդ դաշնակումը գտնվեց ԱԵ/109 («Երաժշտություն Սողոմոն արեղա Սողոմյանի» և ՀԵ/47-ում: Խոսքերը լրիվ զգրված են, քայք երաժշտության գրությունը (հայկական ձայնանիշերով) անհնամ է, ձայնակազմը պարզ չէ, տոնայնությունը պայմանական է: Ներդաշնակությունը «դարցական» բնույթի է, նրանում կան կոմիտասի վաղ շրջանի գրությամբ բնորոշ գծեր (օրինակ, ստորին ձայնի գամ-ժայական շարժում, հատկացնելը, որ առկա է նաև «Ահա ծագեց» և «Հասրաճ» խմբերգերում), միևնույն ժամանակ կան որոշ տարբեր, որոնք այս հատորում հրապարակվող, արդեն Պոլսում գրված վերջին դաշնակումներում ևս պահպանվել են:

Հրապարակվող խմբերգի (2 տարբերակ) աղբյուրներն են՝ 442/24 և 27ը: Այս դաշնակումները սեպագիր, փոր-ինչ ուրվագրային են, քայք ընդարձակված: Երկու դեպքում էլ երգին առնական-հեղոսական ոգի հաղորդող, հաջող իրականացված մի դիտավորյալ կոշտություն կա ներանց թե՛ դիրքի, թե՛ հարմոնիայի և ձայնատարության մեջ. այդ տեսակետից կարևոր են նաև կրկնվող հնչյուններով շեշտաշարիում ու առանձին մեղեդիական ֆրագմենտի նմանակումը: Առաջին տարբերակի համար որպես կատարող նկատվել է ունեցել եռամսյակ դարձական խումբ (ինչպիսին բնութագրված է «Ես լսեցի» երգի պարտիտուրում), զետեղված է հատորի հիմնական մասում, հեղինակի հայկական ձայնանիշերով ուղղումները նկատի են առնված: Երկրորդը, հատկացված քառամսյակ արական խմբի, զետեղված է Տարբերակներ բաժնում: Իրական-

րից միայն երկրորդ տարբերակում գրված են 2-րդ քառերի «հոգի վարդան» և «եղնի ղուր-քան» արտահայտությունները:

Այս երգի խոսքերը (Ս. Ֆելեկյանի) սկզբնապես գրված են եղել Մշո քաղաքում: Որոշ երգարաններում քաղաքը պահպանված է, երբեմն երգն անվանված է «Մշեցու երգ առ քաջն վարդան», սկսվում է «Իմ խայրենյաց խոգի վարդան»: Այլ երգարաններում տեքստն այս կամ այն չափով վերածված է գրականի: Ընդհանրապես, մի քանի այլ երգերի նման, այս երգի տեքստը ևս քաղվածիվ (թեև փոքր) տարբերակներով է տալիս: Կոմիտասի ձեռագրից երևում է, որ նա հակված է եղել դեպի գրական տարբերակը, սակայն «ղուրքան» արտահայտությունը, որ ընդհանրապես նրա երգերում չկա, այնուհետ պահպանել է: Մշակման մեջ խուսձը տեղադրելը առանձնապես քաղի չէր, քաղի առաջին տարբերակի 2-րդ ձայնի 9—11-րդ տառերից, որտեղ հեղինակի դրած պատգամները պարզանշանով՝ դժվար էր այդ ձայներում մտքի ամբողջականությունն ևս պահպանել:

Երկու տարբերակն էլ հրապարակվում են առաջին անգամ:

25. **Ես լսեցի մի անուշ ձայն** կամ այլ կերպ **Երազ:** Այս երգին ևս, ինչպես նախորդին, կոմիտասն անդրադարձել է թե՛ վաղ-չեքմանական, թե՛ ուշ-պոլսական տարիներին: Հայտնաբերված թուր տարբերակները եռամսյակ են, դրանց համեմատությունից երևում է, որ ներդաշնակությունը շարունակ պարզեցվել է:

Սկզբնական տարիների ներդաշնակումներից 391/22-ը բնորոշ է հարմոնիայի «հետավոր» էն-հարմոնիկ շեղումով (առ մամորի ցածր II աստիճանին նուսհիշյունը մի միմբ փոքրածախյալ կառուցվածքով), տոնիկայի վրա հենվող պարզալ կադանցով և կվինտակորդային ավարտով: 393/31-ում ներդաշնակությունը համեմատաբար պարզ է, քայք ձայնների լրացուցիչ շարժում է տրված, կադանսն ավտենտիկ է, առաջին ավարտում դարձյալ տոնիկայի վրա հենված: 498-ում ձայների ավելորդ շարժումը համված է, քայք երգախառմում ունի փոքր և մեծ ֆելետայի, կարդենտի և ջութակի նվագակցություն: Հավանաբար, այս տարբերակն է կատարվել 1918 թ. ապրիլի 27-ին Փոկոյան ճեմարանի աշակերտական գրական-երաժշտական երեկոյին, որի հայտագրում «Երազ» երգի համար նշված է «դաշնակեց և նվագորդի վերածնց Կոմիտաս վարդապետ» («Նվագորդը» անվանումն այս հայտագրում պետք է հասկանալ անհամբ: 1905, հունիսի 25-ի նամակում Մ. Բաբայանին գրել է՝ Ենմարում մի փոքրիկ նվագորդ նմ կազմի (Օր-

chester): Սակայն, գործիքային նվագակցությունն այստեղ միայն երգչախմբի հնչեղությունն ուժեղացնելու և որոշ չափով զուգակցողելու դեր է կատարում: Թվարկված օրինակներում չափը ոչ ինչ 9/8 է, ինչպես հետագայում է գրել, այլ 6/8: Չափըն ու տակտաքաժանումը՝ փոխված, դրան (երրորդը՝ առանց գործիքային նվագակցության)՝ թերեւ ենք հատորի Տարբերակներ քաժնում: Հրապարակվում են առաջին անգամ:

448/17-րդ հոտոտիկայով տպագրվածի սևագրությունն է, նրանից մեկ տոն ցածր դիրքում: Իսկ 501-ը՝ այդ տպագրվածը, որ ներդրված է «Օշական» կոչվող գրական ժողովածուում (էջ 22): Կոմիտասի երգին կցված է խմբագրության հետևյալ ծանոթագրությունը. «Տոմարային երաժշտության վերածնունդի ախույան Կոմիտաս վարդապետ՝ Օշականի նվիրած է իր այս անտիկ եղանակը ծանոթ» «Երագ»-ին, որ ազգային երգերու ամենեն թանկագին, ամենեն սրտանույլ և ամենեն մտերմիկ նույններեն մին է: Դպրության համար մեր ընթերցողներուն տրամադրության ներքև կդնենք նաև երգին քառերը, որոնք կապակին ազգային երգարաններն ունան մեջ: Ի Դպրությանը տիկնանց օժանդակ միության՝ Հեթմին Գ. Անադան: Կոմիտասի մոտ ճշված է՝ «Գրի առաջ և դաշնակնե Կոմիտաս վարդապետ», նրան հետևակցված է «Ժգական, արական կամ խառն» խմբի:

«Երագ»-ի այս վերջին տարբերակը գետնելված է ներկա հատորի հիմնական մասում: Սրա ներդաշնակումը հեղինակն ավելի ևս պարզեցրել է, քայքայ քարսացրել և հեռացրել է կենցաղում այդ երգի համար արմատացած տրաֆարետից: հաջող օգտագործված են պահվող ձայններ: Տեմպի ցուցիչը և կատարման առաջին կրկնախմբին նորաշնակումները հեղինակին են, որ տրամաբանությամբ հետևելով կարիք եղավ ավելացնել երրորդը: Պետք է նաև հիշեցնել, որ այս երգի հաջորդ տները կատարման լրացուցիչ, երբեմն բոլորովին այլ երանգներ և տեմպ կախանան: Բազմատոն երգերի առանձին տներում կատարման այդպիսի մանրամասներն ճշելը թեև ընդունված չէ, այլ ինքնին հասկացվում է երգի խոսքերի քովանդակությունից, սակայն գեղարվեստականությամբ համար չափազանց կարևոր է: Այդ կապակցությամբ Մի գնդիցիկ պարզ գիշեր էր» և «Ով տեր աստուած» երգերի վերաբերյալ որոշ առաջարկներ թերեւ ենք ծանոթագրություններում:

Հեղինակի ճշած տեմպը չափից դուրս դանդաղ է թվում, ներկայումս «Երագ»-ը դրանից փոքր-ինչ արագ է կատարվում:

28. Ո՛վ մեծաքանակ դու լեզու: Տե՛ս «Մայրենի լեզու» երգի ծանոթագրությունը: Այս նշանակովոր խմբերգը Կոմիտասը ստեղծել է Պոլսում, 1913 թվականին, հայ գրերի գյուտի 1500-ամյակի և տպագրության 400-ամյակի հանդեսներին կատարելու նպատակով: Հետաքրքրական է, որ այդ ժամանակ մտաբերել է նաև «Մայրենի լեզու» երգը, 461-ում գրված է՝

- Ով մեծաքանակ,
- Մայրենի լեզու, մայրենի քաղաք,
- Հավերժ բնության իմ հոգու համար.

Ըստ երևույթին, ընտրության մարց է ծագել: Բնական է, որ պետք է ընտրել պոլսահայ շրջաններում տարածված «Ո՛վ մեծաքանակ»-ը նաև այն պատճառով, որ դրա եղանակը հրապարակային ավելի լայն արձագանք առաջ թերելու ընդունակ է, մեղեդու «Մայրենի լեզու»-ն դրա քանակական քննության երգ է:

Երգի մշակման աշխատանքն անդրադարձված է 442/48-րդ, որտեղ այն սևագրված է եռաձայն միատարր խմբի համար և նախորդ է ընթերցողի հետ միասին հատկացված է եղել Գոլիի Նիկողոսյան վարժարանի սանձմիրներին: Իրված է Տարբերակներ քաժնում: Հատորի հիմնական մասում գետնելված տարբերակի աղբյուրը հեղինակի ինքնագիրն է, որ մեզ է հասել տպագրված ձևով (ֆակսիմիլ): Այդ ինքնագիր տպագրության տիտղոսաթերթին շարված է՝ «Ո՛վ մեծաքանակ դու լեզու. դաշնակնե Կոմիտաս վարդապետ. 12/25 հոկտեմբեր, 1913. Հորեյի-ճակն կեղողնական Հանձնաժողով կողմից հրապարակ հանված հօգուտ Կրթական Դրամագրության: Կ. Պոլիս, տպագրություն՝ Օ. Արզուման: Հրատարակչության օրինակները կրում են «Մեծ Հորեյի» կեղողնական հանձնախումբ, 1913, Կ. Պոլիս» մասնավոր կնիքը: Երգչախմբի ձայնները ճշված են՝ Սուր, Բարձր, Սուկ, Բաս: Երգի վերջում կան հեղինակի կարևոր ծանոթագրություններ (թերված են նաև այս հատորում, մոտերների տակ): «Երկու տողը» վերաբերում է կրկներգին, «ուրիշ եղանակ ևս» արտահայտությունը հավանաբար ակնարկում է «Մայրենի լեզու» երգը: Տե՛ս նաև «Տեր կեցո դու գձայս» խմբերգի ծանոթագրությունը:

Կոմիտասի համար «Ո՛վ մեծաքանակ» խմբերգի աղբյուր է ծառայել «Աս մայրենի լեզու» երգը (ձայն և դաշնամուր), որ Տիգրան Չուխանյանի կամ Գաբրիել Երանյանի (կամ այդ երկուսի համատեղ) հեղինակությունն է, տպագրված «Հմար Հայկական»-ում (Նոր շրջան, թիվ

2, 1862, 4. Պոլիս, էջ 14—16): Հետաքրքրական է, որ այս հրատարակության մեջ խոսքերի հեղինակ նշված չէ (սովորաբար խոսքերի հեղինակությունը վերագրվում է Ն. Մեզապրյանին), համապատասխան տեղում գրված է միայն «Երգ Ազգային»։ Բաղաճաբար, դրա հիման վրա խոս-

քերի հեղինակ նշված չէ նաև Կոմիտասի երգի տպագրության մեջ. արդյոք հարցն ա՛յն է միայն, որ այդ քանատեղծությունը փոխադրություն է (տե՛ս «Մայրենի լեզու» երգի ծանոթագրությունը)։ Համեմատության համար այդ հին հրատարակությունից բերում ենք մեղեդին.

երգ Ազգային

Երգած
ՆԱՆԻՆԻՍ

Ո՛վ մե - ծա - սանց դու լի - գու. ո՛վ մեջը քար-քար մայ - բա - կան.

փափ. կա - ելն - չիմ քա ռե - քույ. մը - ման ար - ղեք ալ տեղ կա՛ն.

Դւ. որ ճախ իմ ելն յե - ջիր ճախ սի - քույ, ո՛հ մեջս իս - քեք.

այն ճախ զգ-քեզ քո - րո - վելս գեռ իմ մեղս - քեմ չէ ե լիք.

Իմ մայ-րի եր. քաղ ջըր չի - գու. կեանք ա՛մ - առ - առն. կեանք հա լեռ.

կեանք միջո լի-գույ. ճախ - ար - ժան. կեանք ծաղ կա լից. ծաղ - կա - լիս.

Մի՞թե լաղում սկսելով, Կոմիտասն այս մեղեդին զգալիորեն մոտեցրել է հայ քաղաքային-ծողովորդական երաժշտության ոճին, քավական արդյունավետ է ստացվել նաև նրա մյուս մանրամասների հոլովումը։ Առանձնապես նշվելու է գունագեղ ներդաշնակությունը։ Հետաքրքրական է, որ քանքի (իսկ եռաձայն տարբերակում 2-րդ տպագրումների) «նախ իմն» տարրի զաղափարն առնված է սկզբնաղբյուրի նվագակցությունից։

Պետք է ասել, որ Կոմիտասի խմբերգի տպագրված բնագրում տեմպի 15-րդ տակտի մի քեկաբք մոռացված է։ Վրիպակը «նախատարական» է ստացվել, քանի որ ոչ միայն այդ (9 և 13-րդ) և 6-րդ տակտի մի քեկաբքերը, այլև դեպի համաձայն մածոր անցումը ու դրա միջոցով 1-ին նախադասության մեջ դեպի վերջնական տոնայնությունը տեղի ունեցող մոդուլացիան ամբողջապես «պահպանողական» լսողությունների համար «վիճելի» են քվում։ Իրականում վիճելի բան չկա։ Դրանք միանգամայն տրամաբանական և խմբերգի դաշնակաման մեջ սրամտորեն գտնված արտահայտչական ցայտուն ու ինքնատիպ

երանգներ են։ Այդ վրիպակը, ինչպես և բնագրի քանատեղծական տեքստի վրիպակներն այստեղ ուղղված են, և դուրս մնացած երկտողը լրացված է։

Կոմիտասի մշակման մեջ աչքի են զարնում դիմամիկայի և ազդիկայի վերաբերյալ նշումների սակավությունը և կատարման հուզական երանգի վերաբերյալ խոսքային նշումների անսովոր առատությունը։ Այստեղ երգչախմբի ամեն մի ձայնի գրեթե ամեն մի առանձին նախադասությանը կամ ֆրազին, երբեմն նաև մոտիվին (քառատակտ, երկտակտ, մույմիսկ միատակտ կառուցվածքներ) կատարողական բնութագրությունները են տրված, որոնք գլխավորապես քիտում են երգվող խոսքի իմաստից։ Սա նշանակում է՝ հեղինակը մի առանձին վերաբերմունք է ունեցել երգի զաղափարական-հուզական բովանդակության նկատմամբ. խոսքերի իմաստից ելնելով, նա պահանջում է երաժշտության խիստ տարբերակված, դիֆերենցիալ կատարում, պահանջում, որպեսզի լիովին «տեղ» հասցվի» խոսքի իմաստի և տրամադրության ամեն մի նրբերանգը։ Եվ այդ տարբերակումն ըստ երգչա-


խմրի ձայների այնքան մանրակրկիտ է, որ գոյանում է ոչ միայն սոսկ մեղեդիական գծերի, այլև տրամադրությունների և դրանց երանգների մի «պոլիֆոնիա»։ Սա մի հետաքրքրական և կարևորություն ներկայացնող էվոլյուցիա է Կոմիտասի գեղագիտական պահանջմունքների մեջ, որը հաստատվում է նույն շրջանի նրա այլ ըստեղծագործությունների օրինակով (այդ մասին տե՛ս նաև հատորի նախաբանում)։ Կոմիտասի այդ մոտեցումը նաև չափազանց ուսանելի է թե՛ կոմպոզիտորների և թե՛ մանավանդ, կատարողների (խմբավարների) համար։ Ներկա հրատարակության սկզբունքների համաձայն, կատարմանը վերաբերող կոմիտասյան հայերեն նշումները նույնությամբ սկսվում ենք։ Դարձյալ նույն սկզբունքներից ելնելով, դրանց կոնկրետ նշանակությունը նկատի ունենալով, գուցահետաքրքիր գետեղել ենք խաղերեն տեքստի-ներ։ Նույն տեքստիները գործ ենք անել նաև եսանայն տարբերակում։

Մամուլի վկայությամբ, Կոմիտասի այս խմբերգը դարձել է հայ գրերի գյուտի հոբելյանի առիթով Պոլսում տեղի ունեցած փառահեղ մանգիստությունների կենտրոնական օղակներից մեկը, պոլսահայության ամենաքաղաքը ոգևորությունների աղբյուրը (տե՛ս նաև հատորի նախաբանը)։ Մեր ձեռքն անցած հայտագրերում խմբերգի վերջին կատարումը տեւում ենք 1914 թվականի մարտի 16/29-ի համերգում, Պոտի-Շանի ձմեռա-յին թատրոնում։ Սա Կոմիտասի «Հայ գուսան» երգչախմբի նախավերջին համերգն էր։ Կոմիտասի՝ հայրենասիրական թեմաներով գրված այլ խմբերգերի հետ մեկտեղ այս խմբերգը ևս մեծ դեր է կատարել հայ ժողովրդի զանազան հաստ-

լիմներում նրանց ազգային ինքնագիտակցու-թյունը, արժանապատվությունն ու հայրենասի-րական ոգին քաղաքացիները գործում, այժմ էլ այն արժանի սեր ու խորին հարգանք է վայելում։

22—45. (Տարբերակներ Բ մասի երգերի)։ տե՛ս № 1—26 համապատասխան երգերի ծանոթագրությունները։

46. Դարդս լացեք, սարի սմբուլ. (տե՛ս նաև «Արևն իջավ սարի գլխուն» երգի ծանոթագրու-թյունը)։ Գրված է Կոմիտասի 1897—98 թվակիթ տետրում № 1645, էջ 10թ, Բեռլինի ուսումնա-ռական շրջանում, հավանական աղբյի կոմիտե տամանակը 1898-ի երկրորդ կամ 1899-ի ստա-ջին տարեկեսն է, քաջառված չէ, որ եղանակը հորինած լինի ինքը Կոմիտասը։ Բնագիրը սեա-թանք է, մաքուր, հեղինակի որոշ փոփոխում-ներով։ Ներկայումս կենցաղում արմատացած ե-ղանակի համեմատությամբ (տե՛ս, օրինակ, Ավ. Խառակյան, Երգեր և ոտմաններ, Երևան, 1955, էջ 129, ձայնագրություն Վ. Սամվելյանի) այս եղանակը խիստ հարուստ տեսք ունի՝ տարբեր քաղկացուցիչների հյուսված քաղմաստիճան ճնշյունաշար, լադա-ինտոնացիոն զարգացում, զարդացիոն սկզբունքի հետևողական կիրառու-մով՝ ձևի ընդարձակություն և ընդհանրապես քո-վանդակության ճոխություն։ Թեև առանց նվա-զակցության է, քայք ոտմանի որոշ գծեր է կը-րում։ Ստորև լադային կառուցվածքի հակիրճ սխեմը.



Նման ճնշյունաշար ունեցող երգերը պրելիս Կոմիտասը հետագայում (Բեռլինից հետո Էջ-միանական առաջին տարիներից) լադային ճն-շյունների պտերացիոն նշանները դուրս էր քե-րում սողի սկիզբը, քանակի մոտ, միմյուր այս քնագրում բոլոր նշանները դրված են նուսան-

րի մոտ, այդ ձևը մենք պահպանեցինք։

Խուսքերը, որ ոտանավորի տպագրված տես-տից որոշ տարբերություններ ունեն, նուսանների մոտ գետեղեցինք ըստ այդ տպագրված տեսքի։ Այստեղ բերում ենք այնպես, ինչպես Կոմիտասի քնագրում են.

Handwritten musical score on ten staves. The notation is in a single system with a key signature of one sharp (F#) and a common time signature (C). The lyrics are written in Armenian script below the notes. The music features various rhythmic values including eighth, sixteenth, and thirty-second notes, as well as rests and bar lines. The handwriting is in ink on aged paper.

Դարդս լացեք, սարի սյուճրոյ,
Ազկան-ազկան ծաղիկներ,
Դարդս լացեք, բազի բյուզրոյ,
Անպաղ երկնոց զով հովեր:

Երկինք զեփն զիսի սրճան,
Անտառ-անտառ կուլան եւ,
Ճարիս տարան, չանճի տարան,
Հոնգուր-հոնգուր կուլան եւ:

Ա՛յ, յարս ինձի հանք մտնեմ,
Անտառ բողնե ու զնաց,
Սրտիս սաղկեն խորունկ լարեն
Անտառ բողնե ու զնաց:

Դարդս լացեք, սարի սյուճրոյ,
Ազկան-ազկան ծաղիկներ,
Դարդս լացեք, բազի բյուզրոյ,
Անպաղ երկնոց զով հովեր:

Երևում է, որ այս խոսքերը գրված են ուսանավորի առաջին տպագրությունների (1895 և 97) հիման վրա (1902 թվականի հրատարակությունը արդեն չի տեղում այստեղ դեռևս մտքն է), թայց գրված են հիշողությանը (օրինակ, անճար և անգեղ-ի տեղերում գրել է անճար քաղո): Հատ երևույթին, Կոմիտասի ձեռքի տակ տպագրված ուսանավորը չի եղել, որպեսզի երգը սաքրագրելու նրա խոսքերը ստուգեր և ճշգրտեր:

Մեր ձեռքն անցած հայտագրերից երևում է, որ 1910 թվականի հուլիսի 25—27-ին տված իր խմբական համերգներում Կոմիտասը «Կարդրս լացեք»-ը մեներգել է: Հավանաբար այդպիսի չեղանք էլի են եղել:

Կոմիտասյան «Կարդրս լացեք»-ը լուսանկարված վիճակում նախապես մեզ էր տրամադրել եզրիտարակայ խմբավար և երգահան Է. Հակոբյանը (1909-ին մեր խնդրանքով նա քերեց և Կոմիտասյան արխիվին հանձնեց Մ 1645 ձեռագիրն ամրոցչապես): Երգն առաջին անգամ հրատարակել ենք մեր «Армянская народная песня» գրքովում (Մոսկվա, 1965, էջ 46), ուր տեղի տրվեցին պատճառով գեղեցկվել է կիսատ վիճակում, նաև տրամադրել ենք մեր ասպիրանտ Ա. Սարգսյան-Հարությունյանին իր «Հայ քաղաքային երգարվեստը» աշխատության մեջ օգտագործելու («Հայ ազգագրություն և քանակություն. Գյուրեր և ուսումնասիրություններ», Երևան, 1973):

47. Ձա՛յն տուր, ո՛վ ծովակ կամ Մովակ: Բնագիրը՝ 558, թանաթով մաքուր արտագրված, տիտղոսաթղթի՞ն գրված է՝ «Ե՛րկը շնորհակ օրիորդ Մարգարիտ Բաբայանին. Կոմիտաս վարդապետ. Ս. Էշմիածին, 1901, նոյեմբեր 12» (դաշնակահարուհի և երգչուհի Մ. Բաբայանն այդ ժամանակ Թիֆլիսի երաժշտական ուսումնարանում ձայնավարության դաս էր տալիս), իսկ նոտաների մոտ գրված է՝ «Բանաստեղծություն Բաֆֆիի, երգ և դաշնակ ըստ Կոմիտաս վարդապետի»: Իր տեսակով ամբողջական այս միջակման մեջ ներդաշնակության համեմատաբար առատ խրոմատիզմը և դրա օգնությամբ գոյացող զգայնականության ինչ-ինչ գծերը, որ նկատելի են նաև «Տէ՛ր, կեցո՛ղ դու զՀայա» խմբերգի վաղ մարքեթակներում, հետագայում Կոմիտաս-կոմպոզիտորի համար ոչ մի չափով քնդողջ չդարձան: Նա շուտով իր ստեղծագործությունները թորափեց դրանցից:

Մ 558 բնագիրը խմբագրական տեսակետից բավական խմբաքով է, տեմպի ցուցիչը և երանգավիշերը հերիճակինն են: 1955-ին, ձրանախից նոտաները տաքցվելու կապակցությամբ, մենք այն հրատարակել ենք «Մովեստական արվեստ»

ամսագրում (N 4, «Կոմիտասի ձեռագրերը» հոդվածում, լուսապատճեն): Ներկա հրատարակությունը պատրաստելիս բնագրում ապրդան վիդակներն ուղղված են: Արխիվում պահվող N 558 ձեռագիրը նույն երգի մշակումն է, շարադրված ջութակի և դաշնամուրի համար, մի միևնրում (արդյոք ջութակահար Դ. Դավթյանի՞ համար չէ արված, երբ 1909-ին այցելեց Էշմիածին):

«Մովակ» երգ-ռումանը ստեղծված է Բաֆֆու «Աղյալամարս վանքը» ճանապարհագրական աշխատության վերջաբանի 2-րդ հատվածի խոսքերով (Բաֆֆի, Երկերի ժողովածու, 8-րդ հատոր, Երևան, 1957, էջ 307): Հայերի ազգային ազատագրություն և վերագործունեի գաղափարն արծարծող այդ չափածո վերջաբանը քաղկացած է երեք հատվածից. 1-Որ՝ նժդիմ պատանու դիմումն է լուսնակին, 2-րդը՝ ծովակին, 3-րդը՝ հայոց մուղաղին: Կոմիտասի բնագրում խոսքը միայն նոտաների տակ, մեկ տուն է գրված, քայց սովորաբար երգում են երկու կամ երեք տուն, օգտագործելով քանաստեղծության առաջին և երկրորդ հատվածի զանազան տները: Այստեղ նոտաների մոտ գեղեցկվել ենք քանաստեղծության համապատասխան հատվածի չորս տունը: Ստորև գեղեցկում ենք հիշյալ երկու հատվածները լրիվ.

«Մի խորին լուրջան տիրեց սրտին... (») Վարդապետներ զմայնի զմեկուցն անկուս Դրին միայնակություն: Մովի աղբյուրի ձայնը սկսավ լսել լինել, մի վե՛ն զգալուդարյան քաղաքից սրտն վերս: Անու ջեզ աղ զգալուդարյան քանաստեղծաբար արտանկությունը:

Անեն տեղ տիրան խորին լուրջան.

Կարծես քի մեռավ լինի բնություն:

Նստան ազգոր, պանդխտ միայնակ, ձն, ջեզ եմ տեսնում, ո՛վ փայլում լուսնակ:

Աշխարհի սկզբից դու մինչ ի վախճան Երկնակամարով տեսնում ես շրջան. ձն, դու տեսնում ես ճալ ազգ քարեփո՛ւ, Աղբյուր տեսնո՛ւմ ես նորս ցալ անճար:

Աղբյուր դու իս խղճալու նման, Տեսնո՛ւմ Հայաստան ծանոստի կոխում, Բափո՛ւմ ես աշխարհ աղի կարիքներ, Եվ սրտից միջում ցցո՛ւմ եմ նման:

Հա՛ր է քո սիրտը, և խղճդ մեռան, Հա՛նք՝ արյուններ, քանի՞ կտորան Տեսար, լսելիս և դաժնալ պղծառ Հալ երկրի վրա կառնում ես կամար:

Ձա՛յն տուր, ո՛վ ծովակ, ինչո՞ւ լուռ ես, Ոչխոյն լինել չկամի՞ս գոյությունիս: Մարմնից, գեղեցուք, ալիք զնու-զնու, Խառնեց արտասուց աղ ջրերի մեռ:

Հայաստանի մեջ աճեցեիրն վկա
Սկզբից մինչև այժմ, խնդրեմ իմն աստ՝
Մի՛րս միշտ աղաչես կենն Հայաստան
Փշալից անապատ, — կրթեմ յուրաստան:


Մի՛րս միշտ աղաչես ազգը իշխող,
Կի՞նք հառա օտար իշխանի,
Մի՛րս աստուծո արոտի մասին
Ամարժան է հալն ու հալի որդին:

Արդոյց գալս՝ է մի օր ժամանակ,
Տեսնել մարտի գլխին մի դրոշակ,
Եվ աճեմ կողմից պանդուխտ հայազգիք
Գլխից դեպ յուրյանց սիրուն հայքնմիջ:

Դժվա՛ր այդ միայն, տեսո՛ւց վերին,
Կենդանացրո՛ւ հայության հոգին,
Մազիք նոցա դու քո լույս գիտության,
Որով իբր էակը նոցա բանական
Կեանաշեն մարդու կյանքի խորհուրդը,
Կրկինն գործովք միտք փառաբանի:

Ժողովրդականությունն վայելող այս երգ-նո-
վանը Կոմիտասը երթեմն մեներգել է իր հա-
մերգներում և մեներգելիս էլ ինքն իրեն նվա-
զակցել:

48. Հայաստանն. Կոմիտասի խոլերում այս
երգ-նովանից հայտնաբերվել է միայն Էջեռ-
յալ ուրվագրային հատվածը (№ 413):



Ծարուհակությունը տեղաբնակի հաջորդ թերթին է եղել, որ պոկված է, դեռևս չի գտնվել: Այս բնագրում կա հեղինակի դիտողությունը երկրորդ անգամ օկտավային կրկնապատկումներ օգտագործելու մասին (այնպես, ինչպես տպագրված նոտաներում է), իսկ «էլի անկախության» հատվածի նվագակցության վերաբերյալ գրված է՝ «Յած՝ Es, վերև՝ 3-րդ ութնվոր՝ եղանակը կտրած դաշնակներով, իբրև երգ, միշտ PPP»:

Այս երգի դաշնակումը Կոմիտասը գրել է հատկապես Ա. Ծամոնյանին համար, կատարվել է, օրինակ, 1913 թ. 3/18 նոյեմբերին Պոլսի Պոփ-Ծանի ձմեռային թատրոնում կայացած հաներում, 1914 թ. մարտի 4-ին Պոլսի ամերիկացի դեսպանատանը կայացած՝ Կոմիտասի երաժիշտի համերգում: Նույն երգը Ծամոնյանյանի կատարմամբ և Կոմիտասի նվագակցությամբ գրի է առնված երգասանկի վրա՝ «Orfeon record, Blumenthal record and Talking machine co., № 11597 (2005), 1914, Կ. Պոլիս»:

«Հայաստան» երգի կոմիտասյան մշակումը առնվազն երկու տարբերակով տպագրվել է: Դրանք միմյանցից և երգասանկից նկատելի տարբերություններ ունեն: Հնագույնը «Կոմիտաս վարդապետի հինգ սաների» տպագրման է «Հայ գուսան» երգարանի 3-րդ տետրակում (էջ 2, Կ. Պոլիս, 1920), որն իր մեջ ընդգրկում է նաև վերը բերված բնագիր հատվածը: Ցավոք, այժմ Ա. Սարգսյանը չի հիշում, թե կոմիտետ ինչ գրքից է այդ տպագրությունը և որտեղ է բնագիրը: Իր մոտ եղած կոմիտասյան երգերի մասին Կոմիտասյան խնամատար հանձնաժողովին 1921 թ. հուլիս 5-ին գրած նամակում (№ 1627) նա միայն հիշատակել է, թե «Հայաստանը», ինչպես և «Բամբ որոտանը» և «Կոունը», դաշնակի ընկերակցությամբ մեներգեր են, զորս վարդապետը գրի առած է պ. Ա. Ծամոնյանյանի համար, ֆոնոգրաֆի մեջ երգելու առիթով: Ի դեպ նաև, ֆոնոգրաֆի առիթը համոզիչ չէ, այդ կապակցությամբ «Բամբ, փորտան»-ի մասին տե՛ս այդ երգի ծանոթագրությունն այս հատորում. ինչ վերաբերում է «Կոուն»-ին, նորագույն տվյալները հաստատում են, որ այս երգի մշակումը Կոմիտասը ձեռնարկել էր դարասկզբին էջմիածնում (այդ մասին կասվի «Երկերի ժողովածուի V հատորում, «Բուն եղիք, պալատ» երգի ծանոթագրության մեջ): «Կոուն» երգի վերաբերյալ մեր այս պնդումն ընդունելով, մի լրացուցիչ տվյալ ենք ստանում նաև «Հայաստան»-ի գրության ժամանակի մասին: Խոսքը № 1835 նոտային թերթիկի մասին է, որի մեկ էջին «Կե-

ռուն»-ի վաղ տարբերակներից մեկն է՝ մաքրագրված, իսկ շրջերեսին, վերնագրի տեղում, պարզապես Կոմիտասի ձեռքով, մատիտով, անխնամ («Ժամանակավորապես») նշված է՝ «Հայաստան»:

Կոմիտաս վարդապետ, հետագայում այդ երգը ևս այստեղ թանաքով մաքրագրելու նպատակով: Այսպիսով, «Հայաստան»-ը, «Կոուն»-ը և, ինչպես կտեսնենք երկերի ժողովածուի հաջորդ հատորում, նաև «Բուն եղիք, պալատ» երգը գրված են մոտավորապես միաժամանակ, այն է՝ դարի սկզբին, համեմատ դեպս՝ նախքան Կոմիտասի Պոլիս մեկնելը:

Թեև «Հայաստան»-ի հեղինակային լրիվ բնագիր գտնելու մեր քազմաթիվ ձեռնարկումները դեռևս որակյալ արդյունք չեն տվել, քայքայ հույս ունենք, որ երբևէ մի այդպիսի բնագիր կհայտնվի (հնարավոր է՝ Ա. Ծամոնյանյանի թղթերում): Իսկ առայժմ, երբն այնուամենայնիվ հատորից դուրս չթողնելու նպատակով (քանի որ լայն ժողովրդականություն է վայելում), զետեղել ենք 1920 թվականի տպագրությունը, որ համեմատաբար վստահեցին է՝ Նկատի ունենալով. որ այդ տպագրության գոնե մի հատվածը նման է վերը բերված կոմիտասյան թերթի քննարկին, հնարավոր համարեցինք երգը զետեղել ոչ թե Հայկվածում, որտեղ այն տեխնիկական անհարմարություններ էր հարուցում, այլ հատորի հիմնական մասում: Այնուհետև վերաբերվում ուղղված են, տեխնիկային ցուցիչներն ու խոսքերը՝ լրացված, «Ելլ անկախության» հատվածի վերաբերյալ հեղինակի դիտողությունը նկատի է առնված:

Նախկինում տպագրված երկրորդ տարբերակում էական է «Հայաստան, Հայաստան» խոսքերով երգվող ֆրազների տարբերությունը: Այստեղ իբրում ենք այդ հատվածը Բոստոնի տպագրությունից, որը վերնագրված է՝ «Երգեց Ա. Ծամոնյանյան, գրի առավ և դաշնակեց Կոմիտաս վարդապետ» (անթվական):

49. Բամ փորտան: Այս երգը ևս (ինչպես նախորդը) Կոմիտասը դաշնակել է հատկապես երգիչ Ա. Ծամոնյանին համար, քայքայ ոչ թե 1913 կամ 1914-ին (տե՛ս նախորդ երգի ծանոթագրությունը), այլ շատ ավելի վաղ: Համեմատյալ դեպս, ներկա հրատարակության բնագիրը, որ թանաքով մաքուր արտագրություն է, քղթից, ձեռագրից և ալ՝ կողմնակի տվյալներից դատելով, ամենայն հավանականությամբ գրված է 1907-ին Փարիզում, իսկ դրա սկզբնաղբյուրն, անշուշտ, ավելի վաղ է գրված եղել:

Նախորդի նման այս երգը ևս Ա. Շահմուրադյանի կատարմամբ և Կոմիտասի նվագակցությամբ գրի է առնված երգացանկի վրա՝ Orfeon record, Blumenthal record and Talking machine co., № 11598 (2006), 1914, Կ. Պոլիս:

Իր մեղեդիի մեջ ոչինչ հավակնում չունենալով, երգը, այնուամենայնիվ, խիստ սիրված է հայ ժողովրդի մեջ շնորհիվ Ղ. Ալիշանի ջերմ հայրենասիրական խոսքերի (եբրգ ու գնացք զօրացն Հայոց ընդ Վահանայ Մամիկոնեմոյ ի Շավարշական դաշտին վրէժք. Օմ անդր յառաջ) և շնորհիվ այն քանի, որ մեղեդին (երաժշտություն Պ. Բիանկիների) լավագույն ձևով ընդգծեց ծանր և քանաստեղծական խոսքի միջոցով արտահայտվող ողջ թափը: Կարապետ Սահակյան Կիբգորյանցի ձեռագիր երգարանում (1885, Ախալցխա) «Բա՛մ, փորոտանա՛-ի մոտ ծանոթագրություն կա՛» Այս երգը առնված է «Մանդոլինա» ողբերգությունից, ուրեմն կիրառվել է նաև թատերական թեմում: Հրատարակվում է առաջին անգամ:

ՀԱՎԵՐՎԱԾ

50. **Մաք գիշերվա մեջ:** ՀԵ/306. Հայկ Հովհաննիսյանի ձեռքով ստորագրված է՝ «Գրեց (խոսքեր, Ռ. Ա.) Մամիկոն Տեր-Ջաբարյան Դավիթների, Ջայնագրեց (եղանակը Ռոբինեց, Ռ. Ա.) Սողոմոն սարկավազ Սողոմոնյան Կոտիմացի»: Ուսումնավորը միանգամայն սիրողական բնույթի է, մեղեդին, որ վերաբերում է Կոմիտասի սարկավազության տարիների (1890—92), իր ոճով, ընդհանուր երանգով շարականների ազդեցությունն է կրում: Ջայնդեղանակի նշումը՝ ԳԿ., հեղինակինն է եղել: Հեղինակի ձեռագրով մեզ հասած չիմելու պատճառով երգը զետեղված է հաստորի Հավելվածում, և այն՝ կոմիտգիտորի ստեղծագործական կենսագրության տեղակետից ունեցած հետաքրքրականության պատճառով, որպես Կոմիտասի հոբիմոդական ամենատաքին փորձերից մեկը: Հրատարակվում է առաջին անգամ:

51. **Տա՛ն-դո՛ 393/22p—24, 488, ԱԵ/88—89, ՀԵ/203:** Կյանքի սոցիալական անարդարությունը, հայ գյուղացու թշվառ վիճակն ու նրա միամիտ համոզումը՝ հույսը, որվան աստծո և «բարի մարդկանց» կարելիություն վրա, այս բոլորն արտահայտված մանկական անկեղծությամբ և մաքրական ջերմությամբ. Հովհ. Հովհաննիսյանի ո-

տանավորը (1886 թ.) իր այսպիսի բովանդակությամբ ու թեմայով, ինչպես նաև նկարագրական պարագայով (Տա՛ն-դո, տա՛ն-դո... ծամը տվի՛ն...) գրավել է նաև Կոմիտասի, հավանաբար՝ ընդհանրապես ճեմարանականների ուշադրությունը:

Կատելով 90-ական թվականների ձեռագիր երգարաններում զետեղված լինելու հանգամանքից՝ երիտասարդ Կոմիտասի վաղագույն աշխատանքներից է: Պարզ երևում է հանպատրաստից ստեղծված լինելու հանգամանքը ևս: Այդ առումով ակամա հիշում են «Միփամա քաշեր»-ի պատմությունը (տե՛ս Մ. Արեղյանի հուշերը «Կոմիտաս» ժողովածուում, կազմող Ռ. Թերլեմեզյան, 1930, Երևան, նաև՝ Կոմիտասի երկերի ժողովածուի 2-րդ հատոր, էջ 274): Տարբերությունն այն է, որ այն դեպքում եղել է եղանակը և «Լո՛, լո՛, լո՛...» քացականություններից սկիզբ առել ու հարմարեցվել են խոսքերը, իսկ այս դեպքում եղել են խոսքերը, և «Տա՛ն-դո, տա՛ն-դո...» ծամի զանգերի հիմամբ մանցեցումից սկիզբ առել ու խոսքերին հարմարեցվել է եղանակը: Եթե այնուհը երգի գրեթե ողջ ընթացքում հնչում են «լո՛, լո՛» վանկերը, այստեղ նույն ձևով «հնչում են» զանգերը: Այս երգը ևս, ինչպես «Լո՛, լո՛»-ն, դատելով եղծվածից՝ պարտիտուրը հավակնում նուսաններով մի կերպ գրի առնելու և պահպանելու ջնքերից, սիրված ու գնահատված է եղել: Երկու երգերի «ճակատագրի» էական տարբերությունն այն է, որ «Միփամա քաշեր»-ը շատ ավելի բովանդակային և կարևոր լինելով, Կոմիտասը դրան հետագայում շարունակ անդրադարձել է, վերանշակել ու կատարելագործել, մինչդեռ «Տա՛ն-դո»-ն, գտնե մեզ հասած օրինակներում, մնացել է իր նախնական վիճակում, որպես ինքնուստեղծագործողի հանպատրաստից հոբիմոմ:

Հանպատրաստից հոբիմոմ, որը, սակայն, հեղինակի՝ դեռևս ինքնուս երաժշտի, ստեղծագործական անհատուկ ձիրքի համակրելի գծեր է երևան բերում: Դրանցից մեկը կոմսոմունսի յուրաքանչյուր պաշտամունքն է, որ այստեղ, քանաստեղծության տվյալ երաժշտական մեղմաբանման պայմաններում, ինչպես նաև Կոմիտասի՝ նույն ժամանակվա մի քանի այլ և մասամբ հետագայի երգերում և, վերջապես, նաև Մ. Նվնալյանի ու իրականացված ժողովրդական երգերի մշակումներում (որոնք կատարված չեն եղել) շատ տրամաբանված է կիրառված և վաղ Կոմիտասին հարազատացնում է ու նվաճում:

Մյուսը՝ տարբեր չափերի միաժամանակյա կիրառումն է, քազմաչափությունը (պոլիմետրիա)։ կոմպոզիտորական համեմատաբար մի քարդ հնար, որն այստեղ գործնադրված է նույնքան պարզամիտ, որքան պարզափոխ շարադրում է ուսանավորում հերոսն իր մտքերը։ Հիրավի, անմիջական ի՞նչ կապ ունի եկեղեցու զանգերի դարավոր ուժիդ Նազուի մոր խոսքերի հիմքի հետ, մայրն այդ ուժիդն ուշադրություն չի էլ դարձնելու, քննական է, որ նա լսի առաջին զանգը, նա իր սեփական ուժիդով իր հոգսերն է պատմելու։ Եվ, սակայն, հեղինակին պետք է եղել, որ զանգերի դղաճը շարունակ հնչի երգում, իսկ դրա լավագույն (և պարզագույն) հղմաբեր քազմաչափությունն է Այս հնարն էլ՝ քազմաչափությունը՝ կիրառելիս ինքնուս կոմպոզիտորը ելել է $3 \times 5/4 = 5 \times 3/4$ հավասարությունը, որտեղ երեք $5/4$ -անոց տակտերը բուն տեքստն են, իսկ հինգ $3/4$ -անոց տակտերը՝ զանգերը, և գոյացել է մի ջերմաշունչ երաժշտական պատկեր։

«Տա՛ն-դա՛ն»-ում գործնադրված ստեղծագործական մի այլ հնարն էլ ձայնային կվարտետի և երգչախմբի երանգային հակադրությունն է և այդ միջոցով ևս ստեղծագործությանը պոլիֆոնիկ քննու հաղորդելը։

Վերը նշված կոմիտասյան քննադրում «Տա՛ն-դա՛ն» խմբերգից եղանը երգի մեծ ստեղծման պահին որոշակիորեն հետո, հասկանաբար, գործիքավորելու նպատակով գրված կիսաուսուրվագրեր են, մի դեպքում միայն մեղեդին, մյուս դեպքում՝ ակորդային մի նախաբան, մեղեդիի սկիզբը և դրա մնամակումը։ Ներկա հրատարակության աղբյուրները (ԱԺ և ՀԵ) հայկական ձայնամանկերով են. առաջինը թերի է, ուստի օգտելվ ենք երկրորդին, որտեղ թեև պարսիստուրային սկզբները չի պահպանված, քայք քռչգրիտ անդրադարձված է երաժշտության ռա՛նակական կողմը, առանձին-առանձին, բայց վերջին հաշվով լրիվ գրված են կվարտետի և երգչախմբի երգաբաժինները, և դրա հիման վրա հաջորդվեց վերականգնել պարսիստուրը։ Բամի որ աղբյուրը կոմիտասյան ձեռագրով չէ, երգը վետեղվել է Հալեվլաձում։

«Տա՛ն-դա՛ն»-ն դպրոցական երգեցողության քնորոշ նյութ է և, որպես այդպիսին, թե՛ գեղարվեստական, թե՛ երաժշտական-տեխնիկական տեսակետից հետաքրքրական է։ ՀԵ-ում եղանը մեկ տուն երգելու համար է Մեքե խմբագրերինք այնպես, որ ցանկության դեպքում հնարավոր լինի այլ տուն ևս կատարել։ Երգի երաժշտական քննյուրը նկատի ունենալով, ընդհանրապես հնա-

դավոր է կատարել 2 կամ առավել՝ 3 տուն, այսպիսի դեպքում 1-ից, 2-րդ և վերջին տունը, որ և գրել ենք մոտաների տակ։ Խմբերգը հրատարակվում է առաջին անգամ։

52. Վարդը բացվել ա։ ԱՆ/82, ՀԵ/349։ Ժամանակին շատ տարածված հայ քաղաքային-ժողովրդական երգ է՝ սազանդարական քնույրի։ Մեղեդին ավելի լայն արևելյան, մասնավորապես համամարդկովկասյան երաժշտության երանգ ու տարածում ունի, ընդունված է եղել նաև ժողովրդական նվագարանային երաժշտության մեջ։ Ներդաշնակությունը՝ դպրոցական հարմոնիայի կանոններով արված, այնուամենայնիվ, կոմիտասի ստեղծագործության վաղագույն շրջանի հասար քնորոշ է ձայների մեղեդիացումով, զբաղված դոմինանտների օգտագործումով։ Հրապարակվում է առաջին անգամ։

53. Աղոթարանը բացվեցավ կամ Վանքի գեղեցիկ տաղը։ Ռ. Դադկանյանի շատ ժողովրդականացած ոտանավորով ստեղծված այս մեղեդիում, ինչպես և նրա դաշնակման մեջ, որոշ տարրեր հիշեցնում են ուսական ժողովրդական լայնածոր քազմաձայն երգերը և արքայք բնական պոլիֆոնիան։ Այսպիսի լայնաշունչ, շարունակ հոսող (ոչ միայն քայքերային տիպի, որ շատ-շատ է եղել) եղանակով ազատագրական թեմայի երաժշտական մարմնավորումը հայ քաղաքային երաժշտության մեջ համեմատաբար սակավ տարածված և ինքնին շատ հետաքրքրական երևույթ է։ Դա ցույց է տալիս, թե ժամանակին ժողովրդի հոգևոր կյանքում որքան քազմակողմանի և, հետևաբար, խոր է անդրադարձել նրա ազատագրության իդեա։ Երգի ներդաշնակումը կոմիտասի կողմից վկայում է նրա ջերմ հայրենասիրության, դեռևս իր ստեղծագործական վաղագույն շրջանում ազգային ազատագրության գաղափարներով տոգորված լինելու մասին։ Թեև իր տեսակով քաջադիկ, քայք դեռևս միանշանկ վիճակում այս մեղեդին սիրված, գնահատված է եղել։ Դրա վկայությունն են անում երգարանները (Սմբատ Հերթյանի երգարանը, 1890—81 թ., ՀԵ, երկունն էլ էշմիանեցին, և այլն)։

Նկատի ունենալով խմբերգում քանաներկության մտքի շարունակ զարգացումը՝ գեղեցիկ առօրյա դաշտային հոգսերի շարադրումից մինչև ազգային ազատագրության կոչը, որա կատարման կերպը նշանակեցինք՝ սկզբում հանդար-

տիկ, հետզհետեւ ուժգին և հուզումնային: Արտասովորական այդ տպավորությանը հասնելու համար դարելի է մահ եղանակել ոչ լիով խմբով և երգողների քանակը աստիճանաբար պակսացնել: Հրապարակվում է առաջին անգամ:

54. Զեյթուն, անկախ դու աշխարհիկ: ԱՅ/87, ՀԽ/170: Ազատասերն ու ամառիկ Զեյթունի ազատագրական պայքարին նվիրված երգերից է, սխառ բնորոշ իր ազատասիրական ոգով: Ալեքմայտ է, որ դաշնակույմը հատկացված է եղել մեծարանի փոքրահասակ երեխաների (դիսկանտներ և ալտեր) և մեծահասակ ուսանողների (տենորներ և քանտեր) խմբի համար: Հնարավոր է մահ խառն խմբով կատարել, անշուշտ, ավելի ևս տպավորելի կլինի արական խմբով կատարումը. այսպիսի դեպքում, օրինակ, սի-բեմով մաժորում: Մեզ համար դժվար է ճշտորեն կուսակել, թե որտեղից է ծագել այս մեղեդին. կարող է եղած լինել որևէ հավակնություն չունեցած մեղեդիական-արտասահմանական իմպրովիզացիայով խոսքերը շեշտաչափելու արդյունք, կարող է մահ ձևափոխված լինել նվիրույական (գույնե դպրոցական) մի եղանակից: Որտեղ էլ, սակայն, լինի այս մեղեդիի ակունքը, այն դարձել է (կամ սկզբնապես էլ եղել է) բավականին արտահայտիչ մի ստեղծագործություն, որ հիմնադր հարդրում է ոտանկոթի քովանդակությունը: Պետք է կատարել փոքր-ինչ կոշտ-կոպիտ, ծանր, խիստ շեշտերով (գրեթե շեշտաչափելով), առնական: Հրապարակվում է առաջին անգամ:

55. Հապա՛, քաջագունք: ԱՅ/84, ՀԽ/347: Անցյալ դարի 2-րդ կեսի հայ թատրոնական երգերից է և թատրոնական մի շարք այլ երգերի նման պարզ արտահայտված դպրոցական բնույթ ունի: Գրված է շատ երգարաններում: Երբեմն կոչվում է **ԱՔրջակա երգ**: Կարա-Մուրզայի արվեստով (ՆՁ 46—58) կան **ԱՔրջակ Բ**՝ դրամայի 4-րդ գործողության նվագախմբային երաժշտության նվագարանովները, որտեղ **«Հապա՛, քաջագունք»** երգը՝ **«Կարա-Մուրզայի գործիքավորումով»** կոչվում է **«Ռուրդոյների երգը»**, տեմպը ակզորո: Հրապարակվում է առաջին անգամ:

56. Ո՛վ հակազունք: ԱՅ/121 (**«Երաժշտություն Կոմիտաս արեղա Սողոմոնյանցի»**), ՀԽ 345: Ինչպես նախորդը, անցյալ դարի 2-րդ կեսի հայ թատրոնական երգերի տիպական նմուշներից է, քովանդակությունը՝ Վարդան Մամիկոնյանի գործերի ուխտն է: Բանաստեղծության երկխոսական ձևը հաշտությանը իրագործված է կվարտետի և խմբի տեմբրային, ինչպես մահ լայնածոր խորալի և մարտաշունչ քայներգի ուրիշմային ցայտուն հակադրությունով: Հենց դրա շնորհիվ երգի առաջին կեսում պարունակվող պատասխանը հաստատական են հնչում: **«Հալ-երգ»** ասվածն այստեղ բառացի պետք չէ հասկանալ, երգը մարտական ոգի ունեցող կոլեկտիվի միահամուռ, հանդիսավոր երդումի բնույթ ունի: Այսպիսի բնույթը ստեղծելու համար չափազանց կարևոր է կատարումը՝ զուսպ, քայց եռանդուն, ներքուստ լարված:

Հայկական չափանիշերով քննադրել խմբագրական տեսակետից վատ վիճակում է: Զայնահուններ չեն նշված, չի պարզվում խմբի կազմը, երկրորդ կեսում, հավանաբար, 2-րդ և 3-րդ ձայները փոխադարձաբար խառնված են: Այնպես, ինչպես գրված է, միանգամայն անհարմար է թե՛ դիսկանտների ու արական խմբի և թե՛ միայն մեծահասակների արական խմբի համար (ԱՅ և ազ մահն երգարաններում, երբեմն ալտերադիան նշաններից խուսափելով, խմբերգերը գրված են պայմանական **«պարզ»** տոնայնություններում): Մենք նպատակահարմար գտանք խառն խմբի համար շարադրությունը, և երկրորդ կեսում քննադրի միջին ձայները փոխադարձաբար տեղափոխեցինք: Ցանկության դեպքում կարելի է օկտավային տեղափոխություններով երգը մահ կատարել միայն արական խմբով: Վերջապես, հնաբանություն է առաջին կեսը՝ Վարդան գորավարի երգանմանը, կատարել մեծակ (նվագակցությանը կամ խմբի անխոսը ընկերակցությանը), ինչպես, հավանաբար, այն նախատեսված է եղել սկզբնապես:

Հրապարակվում է առաջին անգամ:

Ռ. Ա. ԱՅԻՍԱՆ



СОДЕРЖАНИЕ

От редактора

Х О Р Ы

1. Азгайин орнерг, 1891 г. (Песнь благословение). Слова А. Ташчяна.	
а. Факсимиле первого издания	16
б. Отредактированный перевод на европейские ноты	17
2. Майрени лезу (Родной язык). Сл. С. Назарянца	19
3. Он тар аствац (О, боже!). Сл. В. Мангун	22
4. Та тва улея (Имел бы я крылья). Сл. С. Фелекяна	24
5. Айренц сярв варвац (Зажженные любовью к родине)	26
6. Он тинд и хинд (Ода). Сл. Комитаса	32
7. Азгайин орнерг, 1895 г. (Песнь благословение). Сл. А. Ташчяна	38
8. An den Wassern zu Babel (На реках Вавилона). Псалом Давида № 137	39
9. Аравот лусабер (Утро светоносное). Сл. Г. Пештимаджян	47
10. Арван ичав сари гахун. (Уж солнце за вершиной гор). Сл. А. Исхакяна	49
11. Ми гехецик парз гишер ар (В асию, прекрасную ночь). Сл. С. Назарянца	50
12. Айрик, Айрик, ко айреник (Отец, твою родину). Сл. М. Джаникяна	51
13. Майр Аракси аперов (По берегам Матери-Аракс). Сл. Р. Пюткяняна	53
14. Тох бабуа черге (Пусть не поет соловей)	55
15. Хай! айрик, ехбайрк (Патриотическая песня). Сл. Х. Нар-Пейя	57
16. Тар, кешо ду хайс (Господи, храни ты армию!)	64
17. Ими эл лренк (Доколе нам молчать?). Сл. Р. Пюткяняна	68
18. Мез нор арес цаге (Нам солнце светит)	71
19. О кич алуш (О как нежно). Сл. М. Пешикташяна	76
20. Минчлер уйсов хайти бнютюн (Когда проснется природа). Сл. М. Пешикташяна	79
21. О кич кахир бан (О, что за сладость)	82
22. Пандз ду хай мнютюн (Патриотический марш). Сл. Комитаса	85
23. Ага цаген кармир арес (Вот и солнце засияло). Сл. Раффи	88
24. Им айренц оги Вардан (Вардан — душа моей родины). Сл. С. Фелекяна	89
25. Ес леси ми алуш дзайн (Я услышал нежный голос). Сл. С. Шахвиза	92
26. Он мецсаканч ду лезу (О дивный язык). Сл. Н. Мезпуряна	93

ВАРИАНТЫ

27(12). Айрик, Айрик, ко Айреник (Отец, твою родину) Сл. М. Джаникяна	99
28(13). Майр Аракси аперов (По берегам Матери-Аракс) Сл. Р. Пюткяняна	99
29(13). „ „ „ „ „ „	100
30(13). „ „ „ „ „ „	101
31(13). „ „ „ „ „ „	102
32(14). Тох бабуа черге (Пусть не поет соловей)	103
33(15). Хай! айрик, ехбайрк (Патриотическая песня) Сл. Нар-Пейя	104

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Խմբագրի կողմից

5

ԽՄԲԵՐԳՆԵՐ

1. Ազգային օրհներգ. 1891 թ., խոսք՝ Արշակ Թաշճյանի	16
ա. Առաջին հրատարակության ֆակսիմիլին	17
բ. Խմբագրված փոխադրությունն իտալական ձայնանկարների	19
2. Մայրենի լեզու. խոսք՝ Ս. Նազարյանցի	22
3. Ո՛վ սեր առավան. խոսք՝ Վ. Մանուկյանի	24
4. Թե թե ումնի (Իդն հալ պամիթի). խոսք՝ Ս. Ֆեդկեյանի	26
5. Հայրենաց սիրով գաղված	32
6. 96 թիկն է խիկն. խոսք՝ Վոմիտասի	38
7. Ազգային օրհներգ. 1895 թ., խոսք՝ Ս. Թաշճյանի	
8. An den Wassern zu Babel. Առ գետս Բաբելացաց. Սաղմոս Դավթի, № 187 (հայկական՝ 158)	39
9. Առաւոտ լուսաբեր. խոսք՝ Գ. Փնշտիմանցյանի	47
10. Արեւն իշուճ սարի գլխուն. խոսք՝ Ավ. Իսահանյանի	49
11. Մի գնդեցիկ պարզ գեշեր էր. խոսք՝ Ս. Նազարյանցի	50
12. Հայրենի, Հայրենի, քո հայրենիք. խոսք՝ Մ. Ջանիկյանի	51
13. Մայր Արաքսի ափերով. խոսք՝ Ռ. Պատկանյանի	53
14. Թող դրաւ չերգի.	55
15. Հա՛, ապրիմք, եղբա՛րք. խոսք՝ Յ. Խար-Պեյի	57
16. Տէ՛ր, կեցո՛ղ դու գժարս. խոսք՝ Մ. Թադիսյանի	64
17. Հի՛ծի է՛լ լսենք. խոսք՝ Ռ. Պատկանյանի	68
18. Մեզ՝ նոր արև ծագի.	71
19. Ո՞՞ք ի՛նչ անուշ. խոսք՝ Մ. Պեշկիսաշյանի	76
20. Միևկեռ հուռճ խաչառ բնություն. խոսք՝ Մ. Պեշկիսաշյանի	79
21. Ո՞՞ք ի՛նչ քաղցր քան.	82
22. Պանիկո՛ղ դու Հայ միություն. խոսք՝ Վոմիտասի	85
23. Ամա ծագեց կարծիր արև. խոսք՝ Ռամֆու	88
24. Իմ հայրենաց հոգի՛ Վարդան. խոսք՝ Ս. Ֆեդկեյանի	89
25. Ես լսեցի մի անուշ ձայն. խոսք՝ Ս. Շամաշի	92
26. Ո՛վ մեծադուռն դու լեզու. խոսք՝ Ն. Մեղակոթյանի	93

ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ

27 (12). Հայրենի, Հայրենի, քո հայրենիք. խոսք՝ Մ. Ջանիկյանի	99
28 (13). Մայր Արաքսի ափերով. խոսք՝ Ռ. Պատկանյանի	99
29 (13). > > > >	100
30 (13). > > > >	101
31 (13). > > > >	102
32 (14). Թող դրաւ չերգի.	103
33 (15). Հա՛, ապրիմք, եղբա՛րք. խոսք՝ Յ. Խար-Պեյի	104
34 (18). Տէ՛ր, կեցո՛ղ դու գժարս. խոսք՝ Ռ. Պեշկիսյանի	111
35 (16). > > > >	114
36 (18). > > > >	117

37 (19).	Ո՞՞՛՛՛՛ անուշ. խոսք՝ Մ. Պեշկոպաշյանի	120
38 (20).	Միմզդեա հուսով խաղաա բնութքում. խոսք՝ Մ. Պեշկոպաշյանի	122
39 (21).	Ո՞՞՛՛՛՛ ըսողքի բան.	124
40 (22).	Ամա ծագեց կարմիր արև. խոսք՝ Րաֆֆու	128
41 (24).	Ի՞՞՛՛՛՛ հայրենյաց հագի վարդան. խոսք՝ Ս. Ֆելեկյանի	127
42 (25).	Ես լսեցի մի անուշ ձայն. խոսք՝ Ս. Շամազիզի	129
43 (25).	» » » » » »	129
44 (25).	» » » » » »	130
45 (26).	Ո՞՞՛՛՛՛ մեծաբանն դու՝ լեզու. խոսք՝ Ն. Մեզկուրյանի	130

Մ Ե Ն Ե Ր Գ Ե Ր

46.	Դարդա լացեք, սարի անբու. խոսք՝ Ազ. Իսահակյանի	135
47.	Ձա՛յն առար, ո՞՞՛՛ ծովակ. խոսք՝ Րաֆֆու	137
48.	Հայաստան. խոսք՝ Լ. Միրզա-Վանանյանի	140
49.	Բա՛՛՛. փորտում. խոսք՝ Ռ. Ալիջանի	143

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Մ

50.	Մոսք գիշերվա մեջ. խոսք՝Մ. Տեր-Ջաջարյանի	149
51.	Ձա՛՛՛-դա. խոսք՝ Լ. Հովհաննիսյանի	150
52.	Վարդը բացվել ա ծաղկոցի՛ն՝ խոսք. Ռ. Պատկանյանի	152
53.	Աղոթարանը բացվեցով. խոսք՝ Ռ. Պատկանյանի	154
54.	Զեյթո՛ւն, անկտիս դու աշխարհիկ.	155
55.	Հապա՛, քաջազունք.	157
56.	Ո՞՞՛՛՛՛ հայկազունք.	159

Մ Ա Ն Ո Յ Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ե Ր (Ռ. Արայանի)	168
--	-----



Հրատ. խմբագիր՝ Լ. Ա. ԱՍՏՎԱԾՍՏՅԱՆ
 Գեղ. խմբագիր՝ Օ. Ա. ԱՍԱՅՐՅԱՆ,
 Յեթ. խմբագիր՝ Ա. Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
 Վերատպող սրբագրիչ՝ Ա. Ա. ԼՈՎԱԾՅԱՆ

934 (1094 m)
 701(01)78 78: շՃ

© «Հայաստան» հրատարակչություն, 1976


ՎՃ 08907,

Գրադիր 1256,


Տպագրանիշ 2000

Հանձնված է տպագրության 12/IV 1976 թ.: Մտարդգրված է տպագրության 20/I 1976 թ.:
 Թուղթ՝ ֆո-նթ, 60x60/8, Հրատ. 21,8 մմ. + 1 ներգիր տպագր. 25,3 մմ.: Նիւեր՝ 2 ա. 75 կողմ:
 «Հայաստան» հրատարակչություն, Երևան—Փ, Տեղյան 21.

ՀԱՅԿ ՄԻՆԻՍՏԵՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ Հրատարակչություններին, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերին
 պատկան կամերին Հակոբ Մեղակյանի անվան պոլիգրաֆիկական, Երևան, Տեղյան 21.



1355



QILU Chibangun Qian, Qian.



FL0071883

